№ 163 ՇԱԲԱԹ 27 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 27 ՅՈՒԼԻՍԻ № 163

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ. օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔՈՒՆԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ՄԻՆՉԵՎ ՏԱՐԿԱԾ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. Նամակագրում՝ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրներով՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂԵՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ՝ -20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Վիլնայում՝ Большая 38 Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թուի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդագրվաճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐԱՄԱԶԴ ԸՆԿ. ՆՊԱՍՏՈՎ պավող ՁԱՆԳԵԶՈՒՐ գաւառի ՂԱՓԱՆԻ և ՄԵՂՐԻԻ շրջանի ԳԻՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր են մէջնակարգ կրթութիւն ունեցող ուսուցիչներ մասին թող դիմեն ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍԻ 20-ը հետեւեալ հասցէով. Баку, Телефонная, А. Г. Вачьянцу—Ուսումնարանական Ցանցնաժողովին:
(ο.Մ.) առ. 594. 3 1

ՅԱՂԹՈՂՆԵՐ ԵՒ ՊԱՐՏՎՈՂՆԵՐ

—

Բալկանեան պատերազմի մէջ տեղի ունեցած եղբայրասպան պատերազմը վերջացաւ։

Դա չափազանց անժողովրդական և անախորժ մի պատերազմ էր, որի ոչ յաղթութիւնները և ոչ պարտութիւնները ոչ ոքի ուրախութիւն և բաւականութիւն չէին կարող պատճառել։

Կը յաղթեն արդեօք սերբը թէ յոյնը, չերնոգորցին թէ սերբը, բուլգարը թէ ռումինը—միևնոյն է։ Յաղթութիւնը կատարվելու է ազատութեան համար մարտնչող միւս ժողովուրդների ներկայացուցիչների պարտութեամբ։

Դեռ երէկվայ օրը բոլորի շունչը մէկ էր, բոլորի պայմանախօսութիւնը և առաջացրած պատգամները համազօր էին. իսկ այսօր երէկվայ դաշնակիցները ծաղրում են միմեանց, չեն հաւատում իրար հաւատիացումներին և ներկայանում են իբրև այնպիսի թշնամիներ, որոնց համար թիւրքը երեւում է աւելի տանելի, քան երէկվայ իր զինակից բալկանեան ազգութիւնը։

Տխուր փաստերը տեղի ունեցան և պատմութիւնը արձանագրեց իր էջերում ծանր և օտարոտի երևոյթները։

Բալկանեան գժտութիւնների գլխաւոր դրդապատճառը բալկանեան պետութիւնների անզուսպ մրցութիւնն էր քաղաքական ասպարէզում։ Այդ պետութիւններից իւրաքանչիւրը ձգտում էր լինել ամենից խուլրը, ամենից ազդեցիկը, ամենից հեղինակաւորը, որպէսզի ապագայում էլ նա ստանձնի անդրանիկ անդամի կոչում իր վրա։

Բուլգարը ուզենում էր լինել բալկանեան խոշորագոյն քաղաքական ոյժը և բալկանեան դաշնակցութեան ղեկ խաւոր ներկայացուցիչը։

Յոյնը չէր մոռանում, որ մի ժամանակ Թիւրքիան եղել է բիւզանդական կայսրութիւն, և ուշի ուշով հետևում է հարթել ճանապարհ ապագայ մեծ նուաճումներ անելու համար և եթէ հնարաւոր լինի վերստին իր քաղաքական ժառանգութիւնը վերականգնել նախկին մեծութեամբ։

Սերբիան, որ սահմանափակված է օտար պետական մարմինների մէջ, ձգտում է ելք գտնել ծովից դուրս գալու, հեռու երկիրների հետ հաղորդակցութիւն հաստատելու, իր ժողովրդի համար բնակութեան ընդարձակ տեղեր ստանալու։

Իւրաքանչիւր ազգութեան մերձաւոր և հեռաւոր ակնկալութիւնները մի անգամից հանդէս դուրս եկան և իրար բաղխվեցին, ոչ մի դրական օգուտ չը տալով ընդհանուր գործին, բալկանեան ընդհանուր դատին։

Քաղաքական աշխարհը սպասում է, որ բալկանեան պետութիւնները այս անգամ նոր բարդութիւններ չառաջացնեն և ազատեն քաղաքակիների աշխատանքը դժուարահիւս հանդոյցներից։

Թող վերջին պատերազմի նոր զոհերը և անագին կորուստները զսպեն մարդկանց՝ նորից ողջակէզներ հնարելու և անպատեհ եղանակով լուծելու իրանց առաջ դրված գործնական խնդիրները։

Ա. Քալանթար

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԲԵՄԻ ՎՐԱ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յուլիսի

Բուխարեստ.—Ժամը 7 և 20 բօպէին ստորագրված է համաձայնութեան արձանագրութիւնը, որի մասին տեղեկութիւն է տրված մասնակցող պետութիւնների պետերին։ Սերբերը հրաժարվեցին Ստրումիցայից, յունական սահմանը սկսվում է Կարասու գետի բերնից, Լագոսը անցնում է բուլգարներին, Կաւալան իր շրջակայ սահմաններով մնում է յոյների ձեռքում. Առաւօտեան ժամը 11-ին տեղի կունենայ կօնֆերէնցիայի նիստը նախնական հաշտութեան դաշնագիրը և վերադարձի համաձայնութիւնը ստորագրելու համար։

—

Բուխարեստ.—Խաղաղաբար կօնֆերէնցիայի յուլիսի 24-ի նիստում Սպալայիկովիչը ներկայացրեց յայտագիր սերբ-բուլգարական սահմանի վերաբերմամբ կայացած լիակատար համաձայնութեան մասին։ Սահմանը կը սկսվի Ստրումիցայի ճիւղաւորութեան սկզբից, Վարդարից մինչև Պերշէն և Բէլաշեցի, թողնելով Սերբիային Բրէգալնիցայի հովիտը և Պէխչէվօ քաղաքը։ Սերբերի ձեռքն են անցնում Կրատովան, Կաչանին և Իշտիբը, բուլգարներին՝ Ստրումիցան։ Նիստի ընդմիջման ժամանակ վերջնական համաձայնութիւն կայացաւ յոյների ու բուլգարների միջև։ Համաձայնութեանը նպաստեց բուխարեստական պատգամաւոր Կօանդան։ Յոյն-բուլգարական սահմանը սկսվում է Կարասուի բերնից Կուշլարի լեռնաշղթայով մինչև Դիբիկլիի գագաթը և անցնում է Մեստու գետը, շարունակվելով դէպի Բէլաշիցի սարը։ Կաւալան, Սերեսը և Դրաման մնում են յոյներին, իսկ Կսանտին, Գիւմիւլջինան և Լագոս Նաւահանգիստը՝ բուլգարներին։ Յոյն-բուլգարական սահմանի որոշումը բաւականութիւն է պատճառել բոլոր պատգամաւորներին։

Կօնֆերէնցիայի ուրբաթ նիստում միաձայն ընդունվել է տեսական զինադադարի առաջարկը։ Զինուորական պատգամաւորները համաձայնութիւն են կայացրել սարատէդիական մանրամասնութիւնների մասին։ Վենիզէլօսը նիստի սկզբում յայտնեց, որ Յունաստանի և Բուլգարիայի միջև լիակատար համաձայնութիւն է կայացել սահմանի հարցի առիթով, նոյն յայտարարութիւնը արել է նաև Տօնչեվը։ Նախագահ Մայօրեսկուն յայտնել է, որ պէտք է ստորագրել ոչ թէ նախնական հաշտութիւնը, այլ վերջնական, և որ ամեն մի երկիր պէտք է նշանակի իր առանձին պատուիրակը հաշտութեան կօնֆերէնցիայի դաշնագրի արձանագրութիւնը խմբագրելու համար։ Պատուիրակները ընտրված են արդէն։ Կօնֆերէնցիան վճռեց անմիջապէս կարգաւորել դէպի դպրոցն ու եկեղեցին վերաբերվելու փոխադարձ յարաբերութիւնները, նոյնպէս և պատերազմի ժամանակ արված ոչ անհրաժեշտ կարգադրութիւններից առաջացած վնասների հատուցման հարցերը։ Վենիզէլօսի առաջարկութեամբ գներալ Կօանտան նշանակված է զինուորական էքսպերտ այն բոլոր հարցերում, որոնք կարող են ծագել դաշնագիրը խմբագրելիս։ Ցայս կայ, որ հաշտութիւնը կը ստորագրվի շաբաթ օր։

—

Վիէննա.—Պաշտօնական գործերին լաւատեղեակ լրագիրները մատնանշելով «Բալկանները բալկանեան ազգերի համար» սկզբունքը՝ ասում են, որ անհրաժեշտ է վերաքննել Բուխարեստի հաշտութիւնը։ Կարծում են, որ հէնց Աւստրօ-Ունգարիան պէտք է հանդէս գայ այդպիսի առաջարկութեամբ։

—

Պարիզ.—Լրագիրները ուրախութիւն են յայտնում Բուխարեստում հաշտութիւն կնքելու մասին և առարկում են դաշնագիրը վերաքննելու առաջարկի դէմ, գովաբանում են Ռումինիայի վարմունքը և չափաւորութիւնը յոյների, սերբերի ու չերնոգորցիների։ Կարծում են, որ, բացի արհեստականապէս ստեղծված ինքնավար Ալբանիայից, ազգութիւնների պրօբլէմը համարեա թէ լուծված է։

—

Սօֆիա.—Բուլգարական գործակալութիւնը հաղորդում է, որ Կ. Պոլսից բղխող այն լուրերը, թէ Բ. Դրան և բուլգարական լիազօր Նաչէվիչի միջև բանակցութիւններ են տեղի ունենում թիւրք-բուլգարական համաձայնութիւն կայացնելու Ադրիանուպոլիսը Թիւրքիային զիջելու գնով, միանգամայն հնարովի են։

—

Կ. Պոլիս.—Աւստրիական դեսպանի մօտ՝ Ենիքէյում, կայացաւ վեց մեծ պետութիւնների ներկայացուցիչների նիստը, որտեղ խմբագրվեց մեծ վէզիրին այսօր անելու արտակարգ յայտարարութիւնը։

—

Ցէտինիէ.—Արձակուրդից վերադարձաւ ռուսական դեսպան Դիրը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԹԻՒՐՔԱՀԱՅ ԳՈՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԴԷՊԻ ՍԵՐ ԾՈՎԻ ԱՓԵՐԸ

—

Կէրչ, 12 յուլիս

Թիւրքահայ նոր գաղթականներու բեկորներ հուսկ ուրեմն եկան հոս ալ հասան։

Անցեալ շաբթուն օր մը ծանօթ բարեկամի մը յուղարկաւոր գացած էինք մինչև շոգենաւ. հոն տեսանք քանի մը թիւրքահայ եղբայրպէրցներ, որոնք շոգենաւի ցօդհայ բաժնին մէջ մի անկիւն քաշուած և տախտակամածին վրայ ծալապատիկ նստած՝ տխուր-տրտում կը մտածէին։

Եւ որովհետև դեռ ժամանակ կար շոգենաւը մեկնելուն, մենք առիթէն օգտուելով ուզեցինք խօսակցիլ մեր այդ թշուառ ազգակիցներու հետ։ Տարբական քաղաքավարութեամբ զիրենք բարեւելէ յետոյ՝ մօտենալով հարցուցինք իրենց վիճակն ու կենցաղը։

Մեր այն հարցման, թէ որ տեղացի են, ռուսի կուգան և ուր կերթան և ինչու այդպէս տխուր և թախծալից կը մտածեն,

— Աղէ,— պատասխանեց ծալապատիկ նստողներէն մին,—դիւ մզի կը խարցուս մը գեղը, մը վախանը. մեք Խայասան աշխարհից ենք. Մանազկերտու երկրից, քիւրդերու զուլումից փախած եկած ենք էսա ռուսի երկիր գտնելու. մկա կերթանք Եալթա, էնտեղ գործ աշխատանք հարելու, օրէնքով բանելու։

Եւ երբ մենք ուզեցինք իմանալ բուն հեռաքրքրութեամբ Թիւրքահայասանի, մասնաւորապէս Մշոյ, Բուլանըխի և Մանազկերտի վիլայօթ կարեւոր և անդորրիչ տեղեկութիւններ, համբորդներուն երեցագոյնը, որ ալեխառն և տարիքն առած մէկն էր և որ մեկուսի ընկողմանած ծխամորճը (թիւթիւն չբուք) բերանը առած կը ծխէր և խոր հառաչանօք ծուխի քուլաներ կարտաբերէր ընդ ռունգս, պահ մը մեր խօսակցութեան միջամտելով խոր հառաչանօք և սրտի զայրոյթով պատասխանեց.

— Քէ՛ զուրբան, քէ՛ հէյրան աղէ. էդէնց բաներ իսկի մզի մը հարցուր, չունքլի թէ խօսանք շատը կեթայ, մը որ սիրը ա տակնուվրայ կեղնի. քէ ինչ ասեմ. էն տեղրանքի մը խայեր հարի օր կրակի ու բոցի մէջ են. ամ խայ, մը էնտեղի կեանքը կեանք չէ. զժոխք ա, էնտեղի խայեր օլուխ չօղուղ քիւրդերու ձեռն գերի են. Աստուած ինքն ողորմա. զուք էստեղ լաւ էք, ռահաթ էք, օրն հաղար հեղ Աստուծուն փառք տուէք, որ քիւրդերուց զուլում չունիք։

Եւ մինչդեռ մենք այս տխուր նկարագրութեանց անախորժ տպաւորութենէն սրտաբեկ կուղէինք գտնել վերջին անգամ մխիթարական քանի մը խօսքերով սփոփել այդ մեր դժբաղդ հայրենակից և ազգակիցներն, յանկարծ շոգենաւն իր վերջին սոյլը տուաւ և սկսաւ իր խարխիլը ժողվել. այն ատեն մենք ևս հարկադրեալ հրաժեշտ առնելով մեր ծանուցեալ բարեկամէն և նոյն թիւրքահայ պանդուխտներէն՝ տխուր մտածութեամբ հեռացանք շոգենաւէն։

Ց. Ն.

ԱՀՄԷԴ-ԲԷԿ ԱՂԱՅԵՎԻ ՄԻ ՑՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

—

Ահմէդ-բէկ Աղայեվը, կովկասցիներիս քաջածանօթ, որ մի քանի տարի է խարիսխ է նետել գեղանի Բօսֆորի տիերում, երբեմն հանդէս է գալիս թիւրք մամուլում իր հեղինակաւոր խօսքն տալու այս կամ այն հարցի մասին, մանաւանդ երբ հարցը վերաբերում է Ռուսաստանին ու դժբաղդ հայերին։

Նրա հրապարակախօսական ուղղութեան և աշխարհահայեացքների հետ այնքան ծանօթ են Կովկասի հայերը և նրա մասին այնքան շատ բան կայ գրված Կովկասի հայ մամուլում, որ այդ տիրթով խօսել աւելորդ է։

Գուցէ Կովկասի հայը գիտէ նաև այն, որ Ահմէդ-բէկ Աղայեվը, որպէս թուրք համիդական, այդ գաղափարի տարածման մէջ Կովկասի մահմեդականութեան շրջանում ահագին դեր է խաղացել և բաւական տխուր յիշողութիւններ թողել Կովկասի թիւրք-հայական ընդհարումների պատմութեան մէջ։

Այժմ Ահմէդ-բէկ Աղայեվը հանդէս գալով «Թէրջիմանը Հակիկաթ» թերթում՝ իր հրապարակախօսական ամբիոնից բարոյագիտութեան, պարտաճանաչութեան և նամանաւանդ քաղաքական հեռատեսութեան քարոզներ է կարդում հայերի գլխին։

Ի հարկէ զիմակը պինդ պահելու համար, զիջանում է մի քանի դառն խոստովանութիւններ անելու հայ տարրի անտանելի կացութեան մասին Թիւրքիայում և մի քանի կաթիլ էլ կոկորդիլոսի արցունք թափելու, որ հայի դրութիւնը այդքան ծանր է, բայց ընդհանուր առմամբ նա չափազանց այրացած է, որ հայերը փոխանակ իրանց ցաւերի դարմանը օսմանեան կառավարութիւնից խնդրելու՝ դիմել են օտար պետութիւններին։ Ահմէդ-բէկ Աղայեվին, որպէս մեզ քաջածանօթի, չէր արժենայ նշանակութիւն տալ, եթէ նա այսօր չը ներկայացնէր որպէս խտացումն ոչ միայն ամբողջ թիւրք մտայնութեան մտածելակերպի, այլև օսմանեան կառավարութեան քաղաքական աշխարհահայեացքի։

Ուրեմն Ահմէդ-բէկ Աղայեվի բերանով ամբողջ Թիւրքիան է, որ խոստովանելով համարձակ, թէ հայի հայրենասիրութիւնն ու հաւատարմութիւնը կասկածից վեր է, որպէս կասկածից վեր է նաև, որ նոյն հայերի դրութիւնն անտանելի է, այնու ամենայնիւ մեղադրում է հայերին, որ օսմ. կառավարութեան ներկայ անձուկ կացութիւնը նկատի առնելով՝ համբերատար պիտի զտնվէին...

Բայց այդ ապերախտ ժողովուրդը համբերատար չէ գտնվել, այլ օգտվելով հանգամանքից դիմել է մեծ պետութիւններին։

Ահմէդ-բէկ Աղայեվը շատ լաւ գիտէ, որ հայը սպասածից աւելի երկար է համբերել և նրա համբերատարութիւնը պատմական չորքոտանու համբերատարութիւնից էլ անցել է։

Բայց ինչպէս է վարձատրվել.

— Թալանով ու ջարդով համիդեան շրջանում, ջարդ ու թալանով սահմանադրական շրջանում։

Եթէ առաջ տառապող հայութիւնը օրորում էր իրան այն յոյսով, թէ բռնապետութեան վերացումով կը վերանան նաև իր տանջանքներն ու տառապանքները, այսօր այդ յոյսն էլ ցնդած է, քանի որ սահմանադրական Թիւրքիան նոյնքան վայրենի, թալանչի ու ջարդարար հանդիսացաւ, որպէս համիդեան բէժիմը։

Էլ ում և ինչի վրա հայը դնէր իր յոյսը։

Ադայեվը կրկնում է այն հին հէքիաթը, թէ «ամբողջ Թիւրքիան կարօտ է բարեկարգման, թէ կառավարութիւնը լրջօրէն մտածել է այդ մասին և միշտ մտածել է, երբ ուրիշ է եղել»։

Մի բօպէ հաւատանք, որ այդպէս է։ Բայց ինչ շահ դժբաղդ հայութեան, քանի որ կառավարութեան մտածումը մնում է մտածում, այն ինչ մահմեդական բաշիբոզուկներն իրանց դժոխային գործն են կատարում։

Բայց չէ՞ որ անհերքելի փաստեր կան, որ օսմանեան կառավարութիւնը երեսանց մը-տածում է, նոյնիսկ խոստանում բարեկարգել հայերի դրութիւնը և երբէք չէ գործադրում, այն ինչ՝ տակից մտածում է հայութիւնը ընաջինջ անել ու գործադրում է։

Կարող է դուրս գալ մի օսմանցի, ապացուցանող, որ Թիւրքիայի մահմեդականութեան 99%-ը այդպէս չէ մտածում։

Ադայեվը, օսմանեան կառավարութեան ցանկութեան անկեղծութիւնը ապացուցանելու համար, յիշում է կազմված նահանգային օրէնքի և ժանդարմերիայի վերակազմութեան ձեռնարկած լինելը և օտար մասնագէտներ պաշտօնի կոչելու մասին արած որոշումը, խոստովանելով հանդերձ, որ այս բոլոր որոշումներն ու մտադրութիւնները ամբողջովին չը գործադրվեցին...

Գիտէք ինչու։

— Որովհետև դրամ չը կայ և մէկ էլ երկիրը խաղաղ վիճակի մէջ չէ՝ շնորհիւ ձախող պատերազմի։

Բայց մենք գիտենք ամենագլխաւոր պատճառը. դրամի թանկութեան ու առատ խոստումները միշտ մնացել են անգործադրելի. դա անկեղծ ցանկութեան բացակայութիւնն է, քանի որ նա այդ բանից շահ չունի, որի պատճառները մենք բացատրեցինք մեր նախորդ երկար յօդուածով։

Գիտենք, որ ընդարձակ բարեփոխութիւններն առանց դրամի չեն կատարվում և գիտենք՝ Թիւրքիայի պետական մտդուն այնքան մաքուր են լիզել օսմանեան հայրենասէրները, որ այսօր մտածում են պետական հողերն ու պալատները վաճառքի հանել, բայց աւազակներին ու ոճրագործներին պատժելն էլ հօ փողով չէ։

Արդ՝ ինչպէս հաւատալ ազայեվեան Թիւրքիայի անկեղծութիւնն, քանի որ նա ոչ միայն չէ հալածում հայերի վրա անլուր բռնութիւններ գործ դնող աւազակներին և զինաթափ չէ անում մահմեդական ամբոխին, այլ ընդհակառակը կառավարութեան դիմող և նրա պաշտպանութիւնը հայցող հայերին բանտ է դնում, խլելով նրանցից ինքնապաշտպանութեան վերջին զէնքն էլ։

Ադայեվը պնդում է, որ հայերը եւրոպական միջամտութիւնից շահ չունեն, քանի որ եւրոպացիք հայերին պիտի շահագործեն իրանց քաղաքական նպատակների համար, և խորհուրդ է տալիս հրաժարվել այդ մտքից։

Շատ իրաւացի է. բայց կարող է ցոյց տալ մի փոքրիկ և անպաշտպան ազգ, որ չէ շահագործվում։ Հէնց ինքը Թիւրքիան, պետութիւն լինելով հանդերձ, խաղալիք չէ եղել եւրոպական քաղաքագէտների ձեռքում։

Բայց աւելի լաւ չէ՞ շահագործվել, քան մորթվել ոչխարի նման. չէ՞ որ հէնց յանուն այդ շահագործութեան է, որ հայը այսքան դար մորթվում, մարտիրոսանում է օսմանեան բարբարոսների ձեռքով։

Ադայեվը ասում է, որ իսլամները ու թիւրքերը հայերից աւելի բան չունեն և նրանց աւելի բան չէ տրվում, որ իրաւունք ունենային հայերն ևս պահանջելու։

Իսլամներն ու թիւրքերն ունեն ամենագլխաւորը՝ զէնք։ Բացի այս՝ նրանք օգտվում են և մի առանձին արտօնեալ վիճակով, այն է՝ օրէնքն ու իշխանութիւնը նրանց կողմն է և որպէս այսպիսիք նրանք իրանց ամբողջ ծանրութեամբ նստել են հայ տարրի ուսերին։

Ահմէդ-բէկ Աղայեվը, լաւ գիտենալով որ հազար անգամ իր խօսքը դրժող և վարկաբեկ կառավարութեան խոստումներին հաւատացող չը պիտի գտնվի ու հայը երաշխաւորութիւն պիտի պահանջի, շտապում է այդ երաշխաւորութիւնը տալ յանուն Թիւրք և իսլամ մտաւորականների արժանապատուութեան։

Ահա թէ ինչ նոր երգ է երգում։

«...Թող այս պետութիւնը անգամ մը իր ներքին և արտաքին հոգերէն ազատի և գործելու վիճակին գայ, այն ատեն հայերու իրաւունքները, ցեղային զգացումներուն համար անհրաժեշտ ամէն կարգի միջոցներ երաշխաւորելը՝ ամենէն առաջ Թիւրք և իսլամ մտաւորականներուն համար արժանապատուութեան խնդիր մը կը կազմէ...»։

Զը գիտենք Աղայեվը միամիտ հաւատացեալներից է, թէ՞ մեզ է միամիտ կարծում։ Թիւրք և իսլամ որ մտաւորականների արժանապատուութեան մասին է խօսքը։ Եթէ հաւատանք, որ համիդեան շրջանում հայկական ջարդերի մէջ Թիւրք և իսլամ մտաւորականները անմեղ էին, չէ՞ որ «Մ. և Ա.» կոմիտէութիւնը Թիւրք և իսլամ մտաւորականներից էր կազմված և Ադանայի ջարդը հէնց այդ կոմիտէն կազմակերպեց։

Հայը շատ ու շատ անգամ է ապացուցել, որ ինքը Թիւրքից աւելի հայրենասէր է, իսկ համբերատարութիւնը հօ չափ ու սահմանից անցել է։ Բայց տեսնելով որ Թիւրք հայրենասէրները երկիրը հացրել են կործանման, նա նման հայրենասէրների – լինեն դրանք մտաւորականներ կամ ոչ հաւատալ չէ կարող և չը պիտի հաւատայ երբէք։

Թիւրքահայը իր ճակատագրի անօրինութիւնը հաւատացել է մեծ պետութիւններին և յոյս ունի, որ այս անգամ գոնէ այնքան անողորմ կերպով չի խաբվի։ Իսկ եթէ թէ խաբվի էլ, այն դէպքում ևս նա չէ կարող հաւատալ աղայեվեան Թիւրքիային, այլ որպէս ամեն մի հնարաւոր, խաղաղ և թոյլատրելի միջոցները սպառած ժողովուրդ՝ անշուշտ կը դիմի այն միակ յուսահատական միջոցի օգնութեան, որպէսի միջոցի օգնութեան դիմել են Թիւրքիայի անարգ լծի տակ հեծող միւս ազգերը։

Եթէ նրան վիճակված է Թիւրքերի ձեռքով ջնջվել, կը ջնջվի հերոսաբար։

Եթէ այժմ հայը պահանջում է բարենորոգում, որ ազատէր նրան մահմեդական բռնութիւններից, հալածանքներից ու ջարդերից, այն ժամանակ Թիւրքահայի դրօշակի վրա կը լինի գրված՝ «մահ կամ ազատութիւն»։

Կամենում էք ասուզել, դիմեցէք որ հային կուզէք այն հարցով, թէ ինչ միջոցների կը դիմի նա, եթէ այս անգամ էլ եւրոպական պետութիւնները խաբեն նրան, նա հաստատուն շեշտով ձեզ կը պատասխանի.

— Այն միջոցին, որ բերում է մահ կամ ազատութիւն։

Ա. Թ. Մուրադեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.

25 յուլիսի

Կրասնոյէ-Սէլօ.—Առաւօտեան Բարձրագոյն ներկայութեամբ տեղի ունեցաւ Կրասնոսէլեան բանակի զօրահանդէսը։ Հինգ ճակատի վրա կանգնել էին հեռակները, ինժենէրական զօրամասերը, թնդանօթաձիգները, հեծելազօրքը և օդային նաւատորմը զանազան սիստէմի 20 աէրոպլաններով։ Առանձին կանգնած էր Սիկօրսկիի «Մեծ» աէրոպլանը։ Կրասնոսէլեան ճանապարհի աջակողմում տեղ էին գրաւել հերթապահ խումբը, ֆրանսիական զինուորական պատգամաւորութիւնը գեներալ Ժոֆֆրիի հետ և գերմանական ու այլ միսսիաները։ Ժամը 10-ին ժամանեց Թագաւոր Կայսրը լեյբ-գվարդիայի Եգէյեան գնդի համազգեստով։ Ձի նստելով Նորին Կայսերական Մեծութիւնը անցաւ զօրքերի առջևից դիտելով։ Զօրքը և ժողովուրդը ցնծագին ողջունում էին։ Շրջագայութիւնը վերջացնելով Թագաւոր Կայսրը բարեհաճեց՝ ձի նստած՝ տեղ բռնել արքայական վրանի առջև։ Սկսվեց զօրքերի հանդէսը։ [illegible] հրամանատարներն ու Օգոստափառ գլխաւոր հրամանատարը հաւաքվեցին արքայական վրանի առջև։ Կայսրը շնորհակալութիւն յայտնեց նրանց՝ զօրքի փայլուն դրութեան համար։ Այնուհետև տեղի ունեցաւ Բարձրագոյն նախաճաշ։

—

Պետերբուրգ.—Կրասնոսէլեան զինուորական դաշտում Թագաւոր Կայսրը դիտեց Սիկօրսկի տեսակի «Գրանդ» աէրոպլանը։

—

Հելսինգֆորս.—Ընտրողական ձայների հաշիւը ամբողջ երկրում հետևեալ պատկերն է ներկայացնում. սոց.-դեմոկրատները ստացել են 217,778 ձայն, ստարոֆինները՝ 109,293, շվեդները՝ 74,183, երիտասարդ ֆինները՝ 70,133, ագրարները՝ 37,628 և գիւղական բանուորները՝ 3450։

—

Պարիզ.—Սենատը 254 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 37 ձայների ընդունեց երեքամեայ զինուորական ծառայութեան օրէնքը։

—

Լօնդոն.—Զինուորական օդաչու դրնդապետ Կոդին, թռչելով մի ուղևորի հետ Օլդերշոտի մօտ, աէրոպլանի մօտորի պայթվելու ընկաւ 200 ֆուտ բարձրութիւնից։ Օդաչուն և ուղևորը սպանված են։

—

Բազել.—Տնտեսական պահանջներ են առաջադրել Նօբէլի, Մանթաշեանի, Բիլկիի, Թումայեվի և Սարուխանօվ-Կուրինսկի ընկերութեան 4000-ից աւելի բանուորները։

—

Բազել.—Բէնկէնդօրֆի Բալախանիի նաւթահանքում այրվում է նաւթային վիշկան։ Հրդեհը առանձնացված է։

Վերսկսեցին աշխատանքները Բալախանի ընկերութեան բանուորները և Զուբալաշիների բանուորների $^2/_3$-ը մասը։

—

Բաղէն.—Վերսկսվեցին Շէյբլերի ակցիօներական կտաւագործական ընկերութեան գործարանների աշխատանքները։ Բոլոր բանուորները, թւով 8000 հոգի, վերադարձան աշխատելու նախկին պայմաններով։

—

Օմսկ.—Գեներալ-նահանգապետի նախագահութեամբ, եպիսկոպոսների, Զօսորգով քահանայի, հոգևորականութեան, ադմինիստրացիայի և դատական տեսչութեան ներկայացուցիչների ներկայութեամբ տեղի ունեցաւ խորհրդակցութիւն ազանդաւորութեան դէմ կռիւ մղելու հարցի առիթով։ Անհրաժեշտ է գտնված արտակարգ միջոցներ ձեռք առնել բապտիզմի ուժեղանալու վտանգի դէմ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺԱՄՀԱՐԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

—

Մենք հաղորդել էինք մեր ընթերցողներին, որ Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը ուղարկել էր մի հեռագիր Ժամարեան եղբայրներին դպրոցական հոգաբարձութիւն ընտրելու առիթով։

Այդ հեռագիրը տպվեց «Մշակի» էջերում։

Ժամարեան եղբայրները այդ հեռագրի առիթով ուղարկել են իրանց կողմից հեռաւոր հեռագիրը Ընկերութեան նախագահ Ա. Քալանթարի անունով.

«Սորապէս շնորհակալ ենք ողջոյնի համար։ Շնորհաւորում ենք ձեր և ձեր գործակիցների ընտրութիւնը, իբրև հոգաբարձական խորհրդի անդամներ, տեսնելով այդ հանգամանքի մէջ ձեր գործունէութեան առաջադիմութիւնը և մեր ամենայն համար թանգ գործի գրաւականը՝ տարածելու գիւղատնտեսական կրթութիւն մեր երկրում։ Ժամարեաններ»։

ՂԱՐԱԲԱՂԻ ԼՐԱՒԵՐ

III

Ինչո՞ւ է ընկած բաւական վարկը

Խանքենդ, 13 յուլիսի

Ղարաբաղի աշխատաւոր գեղջուկի համար գոյութիւն չունի գեղարուեստը։ Նրա համար ոչինչ զգալի չէ, նա զուրկ է գեղարուեստի նշանակութիւնը ընտրելու գիտակցութիւնից անգամ։

Ի՞նչ բան է թատրոնը, գեղագիտական հանդէսները, երեկոյթները և այլն Ղարաբաղի գեղջուկի համար. դրանք աւելորդ ժամանցի տեսակ են, որտեղ, ըստ նրա կարծիքի, մարդիկ գնում են սոսկ հրճվելու, զուարճանալու համար. գնում են «օյինբազութիւններ» տեսնելու...

Եւ մեթէ կարելի է պահանջել գեղջուկից, որ նա ըմբռնէ թատրոնի և առհասարակ գեղարուեստի կրթիչ ու բարերար նշանակութիւնը, երբ մեր բաղաքախնդիրը— աւելի շուտ՝ գրպանի համար մտածող, քան գեղարուեստի – իրանք իրանց «դերասան» հռչակած խամխամ պարոնները՝ թատրոնական բեմը կատարեալ «օյինբազութիւնների» տեղ են շինել։

Ցիշում եմ, որ այդպիսիներից մէկը, մօտիկ անցեալում, գալով այստեղ՝ յայտնվեց որպէս դերասան և վերջինիս անուան արժանի ընդունելութիւն գտնելուց յետոյ պարզվեց, որ նոյն իսկ կանոնաւոր գրել-կարդալ չը գիտէ և միայն մեքենայաբար կարողացել է այս կամ այն պիէսից մի քանի պարբերութիւններ իւրացնելը։ Եւ այդ պատրաստութեամբ նա դեռևս համարձակութիւն ունեցաւ ներկայացնել «Ասլան-Բասան», բայց, հակառակ իր բիսկի—որ ի հարկէ արել էր շատ փող կորզելու նպատակով—ապաւորութիւնն այն եղաւ, որ սիրողները աւելի լուրջ խաղացին, քան դերասանը։

Սակայն այս տիպի դերասանների բարոյական պատկերը աւելի լաւ ընդորոշում է մի զուտեղական դէպք։

Մի խումբ երիտասարդներ մեր գիւղում յայտնվում են որպէս դերասաններ և իրանց ցոյց են տալիս, որ մայրաքաղաքի յայտնի դրամատիկական խմբից են և իրանցից մէկին յայտնի դերասանի անուն են տալիս։ Պարոնները վստահութիւն ձեռք բերելուց յետոյ՝ սկսում են ներկայացումների փորձեր անել, միաժամանակ իրանց կերակրող ճաշարանից սիստեմատիքաբար իրեր են իւրացնում, մինչև որ մի անգամ ճաշարանատէրը մէկին բռնում է այն րօպէին, երբ նա լիքը օղու շիշը տանելիս է եղել։

Եթէ այսպիսի դէպքեր թւելու լինենք, նրանք, շատ կան. սակայն մեր ցանկութիւնը դէպքերի նկարագրելը չէ. մեր ցանկութիւնն ու նպատակն է ցոյց տալ, թէ ինչն է պատճառը, որ մեր գեղջուկը ցանկալի կերպով կապված չէ թատրոնի հետ և գեղարուեստի մասին հարկաւոր գաղափար չունի կազմած։

Սակայն որպէսզի զանազան բաղդախնդիրների մուտքը գիւղերում արգելված լինի, որպէսզի դերասանի անուան տակ թաղնված թերուսները խպտռ արգելված լինեն գիւղական թատրոնի շեմքից, անհրաժեշտ է դրանց դէմ մաքառելու միջոցների դիմել։

Անշուշտ այդ միջոցները պէտք է լինեն այն, որ գիւղական ժողովրդին բացատրվի, հասկացվի թատրոնի և առհասարակ գեղարուեստի նշանակութիւնը. առանց կանխապէս ժողովրդին պատրաստելու չէ կարելի յուսալ, որ թատրոնական գործը իր կոչման բարձրութեան վրա կը լինի. և, անկասկած, գիտակցութեան եկած գիւղական ժողովուրդը՝ կը ճանաչէ իսկական դերասանին, արժանի կերպով կընդունէ նրան, մինչդեռ ժամանակ և կարասքէ իրան խաբելու նպատակով եկած ինքնակոչ դերասանին։

Այդ առիթով անցեալ ամառ Ղարաբաղի եկ.-ծխ. դպրոցների տեսչի պաշտօնակատար Առաքելեանը մի գեղեցիկ միտք էր յայտնել. ի նկատի ունենալով թատրոնական գործերի մասին ժողովրդի տգիտութիւնը, նա ցանկանում էր մի շրջաբերականով պարտաւորեցնել Ղարաբաղի եկ.-ծխ. դպրոցների ուսուցիչներին, որ նրանք ամառը դպրոցական արձակուրդի ընթացքում փոխադարձ օգնութեամբ գիւղերում դասախօսութիւններ կազմակերպեն և այդպիսով ժողովրդին հակացնեն թատրոնի նշանակութիւնը։

Թէ ինչ եղաւ այդ համակրելի գաղափարի իրականացնելը, այդ մինչև օրս էլ յայտնի չէ։

Արդեօք Առաքելեա՞նը զլացաւ կատարել շրջաբերականների յղումը թէ մեր ուսուցիչները արձագանք չը տուին նրա կոչին։

Յարենայն դէպս այդ դասախօսութիւնների կարիքը աւելի շատ պէտք է զգան մեր ուսուցիչները, և սրանք են, որ պիտի իրանց բարոյական պարքը համարեն՝ գոնէ այժմ ձեռնարկեն գիւղերում կազմակերպելու թատրոնական գործի վերաբերեալ թեմայով դասախօսութիւններ։

Ա. Աալանեան

ՏԱՐՏԱՄ ՎԻՃԱԿ

—

Նուբար առաջարան դասակարգը գտնվում է անհանգստալի վիճակի մէջ։ Ամենուրեք կը լսէք գանգատներ նրանցից, թէ «փող չը կայ, առևտուր չը կայ, օգուտ չը կայ, ապրելն էլ բանկերն են տանում, մեզ բան չէ մնում»... և այլն։ Իսկ գիտակցում է վաճառականը իր անհանգստալի վիճակի պատճառները. ըստ իս՝ այդ պատճառները շատ են, որոնց մէջ ոչ պակաս դեր են խաղում մի տեսակէտով հէնց բանկային հիմնարկութիւնները։

Առաջ ապացուցանեմ օրինակներով։

Նուխում 4—5 տարի առաջ հիմնվեց տեղս փոխադարձ վարկի ընկերութիւնը, իսկ քիչ յետոյ՝ Թիֆլիսի առևտրական բանկի բաժանմունքը։ Վերոյիշեալ հիմնարկութիւնները սկզբում առատօրէն բաց էին թողնում դրամ վաճառականներին, չը կշռելով շատ անգամ էլ խնդրատուների դրամական և վճռողական ոյժը. բաւական էր միմիայն բանկային հիմնարկութեան մօտ կանգնած անհատի վկայութիւնը և հաճութիւնը։ Այս երևոյթը, ընդհանրապէս, ունեցաւ իր հետևանքները, որոնք արտայայտվեցին խառնութիւնների թէ տնտեսային բազմացումով և դրսից ներմուծվող ապրանքների չափազանց քանակով. մի խօսքով, ինչպէս ընդունված է ասել, Նուխում առևտուրը ստացաւ մի որոշ զարկ։ Բայց ինչպիսի՞ զարկ առևտրականների համար. կենսատու թէ մահաբեր, ցանկալով պիտի ասել, որ այդ զարկը երկրորդ տեսակի եղաւ. և ահա թէ ինչու։

Մուրհակային պահանջները, որ պիտի արդարացվէին ժամանակին, վաճառականը չը կարողացաւ կատարել շնորհիւ գիւղատնտեսական արդիւնաբերութեան սակաւութեան, մի հանգամանք, որ կարևորագոյն դեր է խաղում ոչ միայն վաճառականի, այլ և շրջանի ազգաբնակութեան համար։ Բանկային հիմնարկութիւնները շտապեցին փոքրացնել դուրս թողնվող գումարի քանակութիւնը, իսկ շատ անգամ էլ իսպառ մերժել, որով սկիզբ դրվեց առևտրական գործառնութեան երկրորդ պատկերին. վաճառականը, որ բանկը համարում էր մի կարկառող ձեռք դժուարին րօպէների և որի հիմամբ նա ընդարձակել էր իր առևտուրը իսկական պահանջից աւելի, ընկաւ անել դրութեան մէջ, որովհետև նա պիտի վճարեր թէ բանկին և թէ ապրանքատիրոջը, որի մուրհակները, ինչպէս բանկայինը, կանոնաւոր, իր ժամանակին կանգնում էին նրա խանութի շէմքին և պահանջում իրանցը, ապառնալով հակառակ դիպուածում նեղվել նոտարի դրատեղեակը։

Մինչ այդ վաճառականը գործադրում էր բոլոր միջոցները, որպէսզի չանուանարկվի. խնդրում է պարտատիրոջից յետ վերցնել մուրհակը, ժամանակ տալ մի կամ երկու ամիս, նորոգել մուրհակը, եթէ վերջինս բանկային զեղչված մուրհակներից է. իսկ երբ տեսնում է, որ իր խնդրելն ի զուր է, խնդիրքը չը պիտի յարգվի, դիմում է կօլլեգայի օգնութեանը, բայց տեսնում է շատ անգամ, որ սա էլ նոյն իւղի մէջ է տապակվում. երկար դեղեբելուց յետոյ՝ մատնաւոր մարդկանցից եթէ աջողվում է լրացնել մուրհակի գումարը, ապա ազատում է այն բանկից կամ նոտարի գրասենեակից։ Բայց վաճառականի մուրհակը մէկը չէ, այլ շատ, որքան ցանկանաս, հետևապէս նոյն տհաճութիւնների բովից վիճակվելու է նորից անցնել, արդեօք աջող թէ անաջող—ահա խնդիրը։

Առևտրականները պիտի ըմբռնեն, որ իրանց գործի աջողութիւնը մեծ կախումն ունի գիւղատնտեսական ու արդիւնաբերական մասերից, որոնց վրա մեղանում, պիտի աւելացնեմ, հարկաւոր ուշադրութիւնը չէ դարձված, որ փոխառական կապիտալները և դրանից ըղխող մեքենայութիւնները իրանց համար այնքան էլ օգտաւէտ չեն. ընդհակառակը, ինչպէս իրակնութիւնն է ցոյց տալիս, դրանք շատ անգամ պատճառ են դառնում արդի տարատամ վիճակին։

Խարազան

ՀԱՍԱՆՔ ՄԵՐ ՆՊԱՏԱԿԻՆ

—

Զաքաթալա, 19 յուլիսի

Դեռ անցեալ տարի «Մշակի» էջերում լոյս տեսած մեր մի գրութեան մէջ— «Բժշկական օգնութիւնը Զաքաթալայի շրջանում»-ի մէջի այլոց գրել էինք, թէ առհասարակ բժշկական օգնութիւնից իսպառ զուրկ է թէ շրջանիս և թէ քաղաքիս ազգաբնակութիւնը։

Այժմ ևս ցաւ ի սիրտ պիտի կրկնենք, որովհետև մեր լայնածաւալ շրջանում ընդամենը ունենք 3 ծերունի բժիշկներ, որոնք հազիւ կարողանում են իրանց դիմողներին բժշկական անմրջական օգնութիւն հասցնել... Ի հարկէ, չենք խօսում այն մասին, որ նրանք՝ իբրև գիւղական բժիշկներ՝ յանձնված հիւանդների ընդունարանից՝ պաշտօնական գործերով գիւղերը գնալու պատճառով։

Իսկ Զաքաթալայի 5—6000 ժողովուրդը, սեփական բժշկի կարիքը միշտ զգալով, մերթ ընդ մերթ ձայն է բարձրացրել, խնդրել, աղերսել, սակայն այդ աղերսները մինչև օրս մնացել էին «ձայն բարբառոյ յանապատի»... մինչև որ մեր շրջանի կառավարիչ Ա. Է. Սուշչինսկիի գլխաւոր հոգածութիւններից մէկն էլ քաղաքիս ժողովրդի համար սեփական բժիշկ նշանակելու նպատակով աղբիւրներ գտնելն եղաւ։

Վերջապէս ներկայ տարվայ յուլիսի 1-ից նշանակված է Զաքաթալայի քաղաքային բժշկի տարեկան ռոճիկ 1500 ր. քաղաքիս գումարներից։

Եւ որովհետև ինքը գնդապետ Սուշչինսկին կամենում է հմուտ, փորձված, տեղական լեզուներ գիտցող բժիշկ հրաւիրել քաղաքիս համար, ուստի նա չէ վստահանում իրան դիմող ամեն մի անծանօթ բժիշկ փաթաթել ժողովրդի ղլխին, այլ կամենում է անձամբ գնալ Թիֆլիս և այնտեղ մի մասնագէտ, իր սուրը գործին նուիրված երիտասարդ բժիշկ ճարել մեզ համար։

Ցոյս ունենք, որ վերոյիշեալ յատկութիւններով օժված բժիշկներ կը գտնվեն և մենք շատ շուտով կունենանք մի պարտաճանաչ բժիշկ։

Պէտք է ասել, որ այս գործում ինչպէս շրջանիս կառավարիչ գնդապետ Սուշչինսկին, նոյնպէս և քաղաքիս պրիստաւ Փարամազ-բէկ Մելիք-Ալլահվերդեանը մեծ դեր խաղացին։

Սօյզադէ

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱԻԹԱՇԽԱՐՀԻՑ

IX

«Բնարիկ» խումբը եւ նրա գործունէութիւնը Գ. *)

Բագու, 19 յուլիսի

Այդ տարին նաւթարդիւնաբերողների խորհուրդը, որին պատկանում է Ժողովրդական Տունը, կապալով տալիս է նրան «ժողովրդական զուարճութիւններ կազմակերպող ընկերութեանը»։

Ժողովրդական Տանը տարիների ընթացքում գործող հայ, ռուս և մօլոքոս սիրողների խմբերի բոլոր ջանքերը՝ իրանց ձեռքին պահելու այդ հիմնարկութիւնը՝ ոչ մի աջողութիւն չի ունենում, ընկերութեան պայմաններն էլ խմբերի կողմից անընդունելի են համարվում և «Բնարիկ» խմբի առաջ կանգնում է մի դիլեմա. կամ վերջ տալ իր գործունէութեանը, կամ տեղափոխել մի այլ տեղ։

Մինչդեռ խումբը կորոշէր իր անելիքը, մինչդեռ ստեղծված դրութիւնից դուրս գալու մի ելք կը գտնէր նա, խմբի անդամներից մէկը, գործերի կառավարիչ Ե. Եպիսկոպոսեանը, որ ապրում և աշխատում է Սպիտակ-Քաղաքում, հաւաքում է իր գլխին տեղական սիրողներից մի քանիսին և սկսում խմբի անուան տակ Սպիտակ-Քաղաքի Շիրաեվ ֆիրմայի առևտրարանում ներկայացումներ տալ առանց խմբի մեւս անդամների մասնակցութեան, առանց նոյնիսկ նրանց յայտնելու այդ մասին։

Խմբի մնացած անդամները յուզվում են, բողոքում և բացատրութեան հրաւիրում Եպիսկոպոսեանին։ Եւ ընդհանուր ժողովը ընդունում է հետևեալ բանաձևը. «Ի նկատի ունենալով, որ Սև-Քաղաքում ներկայացումներ տալու հնարաւորութիւնից խումբը ժամանակաւորապէս զրկված է, խմբի գոյութիւնը կենդանի պահելու համար իրաւունք տալ Եպիսկոպոսեանին ժամանակաւորապէս, մինչև նորից հնարաւորութիւն կը ստեղծվի Սև-Քաղաքում ներկայացումներ տալու, կազմել Սպիտակ-Քաղաքի սիրողներից մի խումբ և «Բնարիկ» անուան տակ ներկայացումներ տալ, հնարաւոր եղած դէպքում հրաւիրելով խաղալու նաև խմբի իսկական անդամներին»։

Օգտվելով այդ որոշումից՝ Եպիսկոպոսեանը կարողանում է իր ձեռքը ձգել խմբի ամբողջ կայքը, օր. Բնարիկի խմբին նուիրված շորերը, խմբի պիէսները, կնիքը և այլն, որոնք մինչ այդ՝ խմբի քարտուղարի մօտ էին գտնվում, և դառնում է խմբի լիազօր տէրն ու տնօրէնը։

Այնուհետև սկսվում են նրա քայլադրութիւնները։

Երկու տարի նա ներկայացումներ է տալիս Սպիտակ-Քաղաքում, որոնց մասին խմբի անդամները ոչինչ չեն իմանում, ինքնակամ սկսում է աֆիշների վրա գրել «Բնարիկ» խումբ՝ ղեկավարութեամբ (?) Եպիսկոպոսեանի, ստանում է օր. Բնարիկի քրոջից իբրև սուբսիդիա մի որոշ գումար և չը նայած խմբի անդամների բոլոր բողոքներին ու պահանջներին՝ երկու տարվայ ընթացքում ոչ մի անգամ հաշիւ չի ներկայացնում, մի խօսքով դառնում է ամբողջ խմբի միահեծան տէրն ու տիրականը...

Իսկ խմբի անդամները բերանացի բողոքներից բացի ոչինչ չեն անում։

Եւ «пошла писать губернія».

Անցնում են ամիսներ, նոր խմբի մէջ խլրտումներ են սկսվում, պահանջում են Եպիսկոպոսեանից հաշիւներ, իսկ սա դրա փոխարէն թողնում է Սպիտակ-Քաղաքը, հեռանում գործից և Սև-Քաղաքում խանութ բաց անում։ Դարձեալ յանդգնութիւնը սկսում է աւելի լուրջ կերպարանք է ստանում. սկսում են մեղադրել պարոնին խմբի փողերը իւրացնելու մէջ, ասում են, որ խանութը խմբի փողերով է բացել, իւրացրել է խմբի կայքը և այն և այն, իսկ Եպիսկոպոսեանը ոչ մի միջոց չի ձեռք առնում իրան այդ ասէ-կոսէներից ազատելու համար, ոչ մի անգամ հաշիւ չի ներկայացնում և դեռ այդ բաւական չէ, իր գլխին հաւաքելով սիրողների մի նոր խումբ՝ Սև-Քաղաքի ժողովրդական տանը մի ներկայացում ու մի երեկոյթ է տալիս, առանց խմբի անդամների դիտութեան և առանց նրանց հաշիւ տալու։

Այդտեղ արդէն խմբի մի քանի անդամների համբերութիւնը հատնում է, անդամների, որոնք տարիների ընթացքում աշխատանք են գործ դրել խմբի մէջ, և նրանք կտրականապէս պահանջ են դնում հաշիւները ներկայացնելու։

Բայց խմբի կառավարիչը բաւականին խորամանկ քաղաքագէտ է լինում. նա մի օր ժողով է գումարում, առաջարկելով վերսկսել խմբի գործունէութիւնը Սև-Քաղաքում, թողնելով հաշիւները տալը սէզոնի վերջին։ Խմբի անդամները, որոնց սրտին շատ մօտ և թանգ էր խմբի յարատեւութիւնը, համաձայնում են և խմբի գործունէութիւնը վերսկսում են։ Մտնում են նրա մէջ նոր անդամներ, աչքի ընկնող ոյժեր, և սկսվում է նոր գործունէութիւնը, բայց...

Ահա այստեղ է, որ պարզվում է Եպիսկոպոսեանի իսկական պատկերը։

Չը նայելով որ խմբի անդամներից շատերը աւելի շատ աշխատանք են գործ դրնում քան նա, չը նայելով որ իրանց դրդպանից աւելի շատ փողեր են ծախսում քան նա, պարոնը միշտ աշխատում է խմբի տէր ու տիրականը միայն ինքը լինել։

Պիէսների մէջ միշտ լաւ դերերն է պահանջում. կոմիկ լինի այդ դերը, դրամատիկ, ֆատ թէ սիրահար՝ միևնոյն է, ինքը պէտք է խաղայ, պիէսները իր ցանկութեամբ պէտք է որոշվեն փողերը և կայքը իր մօտ պէտք է լինեն և բացի այդ՝ փող ձեռք բերելու համար ներկայացումները թողած՝ երեկոյթներ պէտք է տալ։

Խմբի անդամները, ի հարկէ, անկարող են լինում լուռ ականատես լինելու նրա ինքնակալութեանը, սկսում են բողոքել, կռւել նրա դէմ, և այն ժամանակ նա սկսում է իր դաւերը, մինչև այն աստիճան, որ վերջին ներկայացումը, ներկայացման օրվանից մի օր առաջ, ստիպված են լինում յետաձգել և... ընդմիշտ։

Սէզոնը փակվում է։

Դրութիւնը մնում է նոյնը, ինչ որ առաջ. խմբի կայքը, պիէսները Եպիսկոպոսեանի մօտ, նոր ներկայացումների վնասները խմբի երեք անդամների բաժինօրէն, զանձապահի և կառավարչի վզին, հին հաշիւները անորոշ, օր. Բնարիկի քրոջ տուած սուբսիդիան թանձր վարագոյրով ծածկված և խմբի տէրը դարձեալ Եպիսկոպոսեանը։

Անդամները, լաւ, կարևոր ոյժերը միմեանց ետևից հեռանում են. մնում է դարձեալ միակ Եպիսկոպոսեանը, որը, ինչպէս ասում են, այժմ պատրաստվում է նոր սիրողներից խումբ կազմել առաջիկայ սէզոնի համար։

Դ.

Ահա այսպիսի դրութեան մէջ են գտնվում մի գեղեցիկ, ժողովրդական հիմնարկութեան՝ «Բնարիկ» խմբի գործերը, որը բարեյաջող հանգամանքներում շատ մեծ գործ կարող

*) Տես «Մշակ» № 162.

էր անել և որը ներկայումս գտնվում է մի բաղդախնդիր անձնաւորութեան միահեծան իրաւունքների տակ։

Տարօրինակ է. ուր են, ինչ են շինում խմբի անդամները, այն ինտելիգենտ, գործունեայ մարդիկ, որոնք իրանց ուսերի վրա են տարել տարիների ընթացքում խմբի գործերը։

Ինչու՞ են նրանք այդ գեղեցիկ գործը թողնել մի անձնաւորութեան ձեռքին։

Չէ՞ որ «Քնարիկ» խմբի քայքայման բարոյական պատասխանատուութիւնը նրանց վրա էլ է ընկնում, ինչու՞ են լռել։

Ինչու՞։

Վաղարշակ Թումանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Վերջին ժամանակներս ուշադրութիւն են դարձրել այն բանի վրա, որ աշակերտական էկսկուրսիաների ժամանակ, մանաւանդ վերջերս, ուղեկցողների թիւը յաճախ շատ աւելի է և չէ համապատասխանում էկսկուրսանտների քանակին։ Երբեմն ուղեկցողները էկսկուրսանտներից էլ աւելի են լինում թւով, որը թիւրիմացութիւններ է պատճառում մի տեղից միւսը գնալիս գնացքներով։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը առաջարկել է ուսումնական շրջանների հոգաբարձուներին միջոցներ ձեռք առնել, որպէսզի այդպիսի երևոյթներ այլ ևս չը կրկնվեն։

◆ Թիֆլիսի վրաց ազնուականութեան պարգևատուների և պատգամաւորների ժողովը մտադիր է ձեռք բերել ագրոնոմ Ս. Կաղախովի գիւղատնտեսական ֆերման Լիսի լճի մօտ և ապա նուիրաբերել պոլիտեխնիկումին կրթական-փորձնական ֆերմայի համար։ Կաղախովի այդ ֆերման 127 դեսեատին է։ Ֆերմայի պիտանութեան չափը որոշելու համար այսօր, յուլիսի 27-ին, դիտելու է գնում գիւղատնտեսութեան տեսուչ Տիմոֆեյեվը և ազնուականութեան հոգաբարձուների քարտուղար Ա. Կիսշիձէ։

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան նախաձեռնութեամբ յուլիսի 28-ին, պրոֆ. Ա. Ս. Խախանովի մահվան տարելիցի առիթով, հոգեհանգիստ կը կատարվի հանդուցեալի գերեզմանի վրա Դիմուբէի գերեզմանատանը։

◆ Քաղաքային սանիտարական բժիշկը առատրատնտեսական գործակալի հետ միասին դիտելով 8-րդ քաղաքամասի հացի փուռերն ու ալիւրի ամբարները՝ վերցրել են ալիւրի նմուշներ և ուղարկել քաղաքային լաբորատորիան հետազոտելու համար։ Ալիխանովի ալիւրի ամբարից (8-րդ քաղաքամասում), Մուշխէլի ամբարից (սպանդանոցի մօտիկ) և Միկաձէի ամբարից (Հաւլաբարում) և Անդրեեվսկայա փողոցի № 115 տանը Աւետիսովի փուռից վերցրած ալիւրի նմուշների քննութիւնը ցոյց է տուել, որ այդ ալիւրները փչացած են։ Ցանցաւորները պատասխանատուութեան են ենթարկվում։

◆ Թիֆլիս եկած երկրագործական դպրատեղիների անասնաբուծութեանը հմուտ աւագ մասնագետ Կիևվի պոլիտեխնիկումի պրիվատ դոցենտ Ի. Բէլգովսկին, որին ուղարկել են մասնակցելու կովկասեան ոչխարաբուծութիւնը ուսումնասիրելու գործին, երեկ ճանապարհ ընկաւ դէպի Երևանեան նահանգի Շիրակի շրջանը։

◆ Ինչպէս մեզ հաղորդում են, երգիչ Բ. Ամիրջան վրաց «Նոր-կուրի» աւագների կողմից հրաւիրված է այսօր երեկոյեան երգելու յիշեալ ակումբում Զէլեոնիի սիմֆոնիական օրկէստրի, նոյնպէս և դաշնամուրի նուագակցութեամբ։ Բ. Ամիրջան՝ ի միջի այլ հետաքրքրական նոմէրների՝ կերգէ նաև «Князь Игорь»-ի արիան և վրացական մի քանի երգեր։ Ցանկալի էր, որ Թիֆլիսի ժողովարանի և Արարատեան ակումբի աւագներն ևս օրինակ առնէին վրաց ակումբի աւագներից՝ հրաւիրելով շնորհալի երգչին մի քանի սիմֆոնիական երեկոյթների մասնակցելու, յիշեալ ակումբների յաճախորդներին գեղարուեստական որոշ բաւականութիւն պատճառելու նպատակով։

◆ Տուրիստների Ընկերութեան անդամների 8-րդ խմբակի էքսկուրսանտները յուլիսի 25-ին դիտել են վեհաշուք-պատմական Թանգարանը, Սիօնի տաճարը, եկեղեցական թանգարանը և հայ-լուսաւորչականների Վանքի եկեղեցին։

◆ 5-րդ քաղաքամասի մի խումբ ձայնաւորներ դիմել են քաղաքային վարչութեանը խնդրելով կոյուղիները անցկացնել Խարփուխի թաղում գտնվող կօղակների զօրանոցներում։

◆ Թիֆլիսում բնակվող Ի. Ի. Տէր-Դաւանդեանին թոյլատրված է Գանձակի նահանգի Շամխորի անտառապետութեան մէջ «Սաղիզը-Դարա» կոչված տեղում երկաթի և այլ հանքերի որոնումներ կատարելու։

◆ Քաղաքային ջրանցքի ցանցը ընդարձակելու նպատակով քաղաքային վարչութիւնը նշանակել է ամուրդ օգոստոսի 8-ին։

◆ Սանկտպետերբուրգի բժիշկներ Միրքաքանը և Խատիսեանը քաղաքային քիմիական լաբորատորիան են ուղարկել Դիտրիխի գործարանից վերցրած գարեջուրը։ Գարեջրի հետազոտութիւնը ցոյց է տուել, որ գարեջուրը փչացած է։ Ցանցաւորները պատասխանատուութեան են ենթարկվում։

◆ Գանձակ քաղաքի բնակիչ Մ. Ա. Հայրապետեանին թոյլատրված է Սղնախի գաւառի «Էլտար» կոչված տեղում հետազօտութիւններ կատարել։

◆ Թիֆլիսի օրիորդաց 2-րդ գիմնազիայում բոլոր դասարանների վերաքննութիւնները - ստորին պատրաստական, I, II և III դասարաններում—նշանակված են օգոստոսի 22-ից։

◆ Թիֆլիսի որբերի դատարանի նախագահ Միք. Սուլթանը արձակուրդ է ստացել և մի ամսով բացակայելու է Թիֆլիսից։ Նրա փոխարէն պաշտօնավարելու է նոյն դատարանի անդամ Մակ. Զմշկեանը։

◆ Բէլի-Կլիուչից մեզ հաղորդում են, որ կիրակի, ամսոյ 21-ին, լոյս երկուշաբթի այնտեղ ինքնասպանութիւն է գործել Կիևվի բժշկական ֆակուլտէտի 5-րդ կուրսի ուսանող Ալէքսանդր Յովհաննէսեան Արբշեանը։ Հանգուցեալը եղել է մի շատ համակրելի, համեստ և ընդունակ անձնաւորութիւն՝ և իրանց ընտանիքում աչքի ընկնող անդամներից մէկը։ Բացի այդ՝ նա իր վրա է դարձրած եղել շրջապատող հասարակութեան և Կիևվի համալսարանի վարչութեան ուշադրութիւնը և իր ընդունակութիւններով խոստանում է եղել փայլուն ապագայ. ուստի և այդպիսի մի ընդունակ երիտասարդի վաղաժամ կորուստը իր ծաղկափթիթ հասակում և՛ ցաւալի է և՛ զգալի։ Հանգուցեալը ոչ մի գրութիւն չէ թողել և ինքնասպանութեան մոտիվները մնում են մթնոլորտայն անյայտ։

◆ Յուլիսի 25-ին, Շէլկօվնիկովսկայա փողոցի № 3 տանը յանկարծամահ է եղել Թիֆլիսեցի Գէորգ Բօսսոմովիչ Երմեշով, 70 տարեկան։ Մարմինը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

◆ Թիֆլիսի գաւառի Խատիս-Թէլէթի գիւղում ապրող Իլիա Միխայլովիչ Ասլամազովը յուլիսի 24-ին, առաւօտեան ժամը 7-ին, Վօրոնցովսկայա փողոցում ընկել է աւտոմօբիլի տակ։ Անիւները անցնելով երկու ոտքերի վրայից՝ ցաւ են պատճառել։ Այժմ նա Միքայէլեան հիւանդանոցում պառկած տաղտկալի է։ Բժշկի ասելով, շարդուածքը թեթև է։ Աւտոմօբիլը պատկանում է Կարլ Աղամովիչ Կարաեվին։ Աւտոմօբիլավարն էր շօֆիէր Դաւիդ Մաքրաձէ։ Ասլամազովի ասելով, ընկնելուց անմիջապէս յետոյ ոչինչ ցաւ չը զգալով ոտքերում, համառձայնվել է ստանալ շօֆիէրից 4 ռ. ոչ ոքի չը գանգատվելու մտքով, բայց որովհետև յետոյ զգացել է ցաւեր, ուստի և յայտնել է ոստիկանութեանը։

◆ Երեք չարագործներ՝ Միքայէլ Նօսիէվիչ Վարդանով, Դարսէ Ասատուրովիչ Զուբարով և Սարգիս Թօմազով, յուլիսի 24-ին, երեկոյեան ժամը 11-ին, Մենինսկայա Ներքափողոցի № 3 տանը ապրող թիւնեցի Շուշանիկ Մարտիրոսովնայ Բաբօվային, 18 տարեկան, դուրս կանչելով՝ կօշկակարի դանակով վիրաւորում են 9 տեղից՝ փորի, պրանցի և այլ մասերում, ու ապա անյայտանում։ 6-րդ քաղաքամասի ոստիկանութեան ձեռք առած միջոցներով Զուբարովը կալանաւորված է, Վարդանովը ոստիկանատուն է գնացել յօժարակամ, իսկ Թօմազովը փախել է։ Վարդանովը (Վարդանաշվիլի) հարցաքննութեան ժամանակ յայտնել է, որ ուզում էր սպանել Բաբօվային իրան դաւանանելուն համար՝ խանդից դրդված։ Վիրաւորը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց և կեանքին վտանգ է սպառնում։

◆ Յուլիսի 25-ին, երեկոյեան ժամը 10-ին, Վլադիմիրսկայա փողոցի № 14 տանը ապրող 17 տարեկան Ալէքսանդրա Իվանովնա Օվսեաննիկովան անձնասպանութիւն գործելու նպատակով նաշադիրի սպիրտ է ընդունել։ Անդամ դրութեան մէջ նրան շտապօգնի օգնութեան կառքով փոխադրել են Միքայէլեան հիւանդանոց, յետոյ էլ վերցրել են տուն։ Կեանքին վտանգ չէ ըսպառնում։ Պատճառը պարզված չէ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ

Երազող արևելցիք, ժողովուրդներ, որոնք, ծայրը անյայտութեան մէջ կորած դարերի կուսակութեան միջով, վիպական աւանդութիւնների, զրոյցների գրկից են գալիս, սիրում են թմբրութեան ծոցը մտած՝ յետ լողալ դէպի զգացումների անեղութիւնը, դէպի կախարդական այն ոլորանները, ուր զմայլիչ անուրջներն են, ուր զգլխիչ շշափունքներն են, ուր կեանքն անոյշ երազ է, և երազը նիւթականս շրջանակիցը բարձր, աղջամղջային մթնոլորտից վեր, գերագոյն հեշտանքի լուսոլորտն է ընծայանում։ Մի քանի կաթիլ հաշիշ՝ և քուն ընդ արթուն թմբրութիւնը պարարում է քեզ և փոխադրում գունագեղ տեսիլների աշխարհը։ Մտնենք։

Շոգը սաստիկ է, հնոցային։ Այդ մեծ շէնքը, ժողովարան ձմերային, այժմ դատարկ է, անապատ, և պէտք է որ նրա ընդարձակ, կիղէչ ճառագայթների թափանցումից պատսպարված սրահների մէջ թաքաւորէ զովը լռութեան հետ։ Հովանոցաւոր մեծ մուտքը ցուցանակված է. «Պատկերահանդէս Բաշինջաղեանի»։

Մտնում ենք։ Ամայի մեծ շէնքի մէջ սընվող հովը համբուրում է ճակատս հմայիչ շշափով։ Ինձ թւում է, թէ լռութեան մէջ, կիսաստուերում նստած անհերոյթ ոգիները փսփսում են, և այդ փսփսուկի սօսաւիւնն է ճակատիս վրայով անցնողն և ինձ այնպէս հեշտալից զգուողը։ Հովատուն սանդուղքներն ինձ վեր են տանում. միևնոյն լռութիւնը վերնասրահում և ոգիների նոյն մունջ փսփսուկը։

Մեծ սրահի դրան մօտ, իբրև բարապան նստած է, այցելուին սպասելով, մուգքի տոմսակ արձակողը. լուռ է և նա, տիրապետող անդորրութեան հետ ասես տարբացած։

Մտնում եմ մեծ դահլիճը. լայն, երկայն, բարձր. և նա լի՛, էլ՛ լռութեամբ. մի մեղմիկ լոյս, առանց արևային շողքի, և մի հատիկ այցելու միայն, որ շարժվում է անձայն ոտով, մէկից միւսին անցնելով պատկերների առաջ։ Մի բոպէ յետոյ ես եմ միակը և շուրջս մի կախարդիչ տեսիլ, երկնս-երկին գոյների, լոյսի և ստուերի մի զուգախառնութիւն. ընութեան ամենագեղ տեսարաններից կտորներ, մերթ գողտրը, ժպտունը. մերթ վսեմը, յափշտակողը. մերթ տխրամածը, խորհրդաւորը, խլած և դիւթական արուեստով կտաւի վրա հանած, հաստատած։ Սեհեռում ես աչքդ այդ տեսարանի վրա, սեհեռում ես և մխաքդ. ընկղմըվում ես ամբողջ ուշքովդ նրա մէջ. դիտում ես, դիտում ես՝ ու չես յագենում։ Նստիր այդ աթոռի վրա և այնպէս դիտիր. կը դիտես ժամերով և կը մոռանաս էլ ինքդ քեզ այդ աթոռի վրա, մինչև որևէ ազդի քեզ սթափեցնելը։

Դա Սև-ծովի մի կտորն է Կովկասի ափերին մօտ. մանրիկ ալիքները բեկբեկել են ծովի երեսը. սա մանր ժպտում է լուսնի գգուանքի տակ, արծաթեայ ժպիտ, աղու, անոյշ, դիւթական. դա հանկարծ մի վիպերգութիւն է։ Այնտեղ՝ ելքուսն է դա. լեռները շուրջբոլոր տեղն են տալիս նրա առաջ խոնարհութեամբ ու նրանց միջից նա բարձր է անում իր գլուխը կոնաձև աւարտով ու սպիտակ շղարշաւորված վերուստիվայր՝ մինչև ուր լոյսերը գունագեղում են սաֆիրայի և մանուշակի երանգներով սառնացային հովտի վերարտաշնչութիւնը։ Մոգե՛ղ տեսիլ. վեհախոհ է Էլբրուսը։ Բայց այն կողմ, լեռների հետ կուռմնած, որոնք կարծես սեղմում են նրան իրանց գրկում, գագաթը բարձր սողացնում է այդ ըմբշական գրկախառնումներից վեր՝ գոռոզ կաղբէկը յաղթական։ Նրա ձիւնաթաղ կատարի տակ լեռներն ի վայր բոլոր ծործորները շղարշված են երկնարանգ. մի մոգական լուսախաղ՝ լեռնային ոգիների ձիւնակերտ ապարանքների վրա։ Ռաղմավերական լեռնային ուղին առաջնորդում է ձեր աչքը դէպի վեր, վհերի եղերքով, ժայռերի տակով, դէպի վեր, դէպի սառնեղէն սարաւոյթները Կաղբէկեան լեռնապարի։

Քանի՞ քանի գեղազարդ, ակնապարար, մտապրաւ պատկերներ ծովերի ու ծովակների, գետերի ու գետակների, տափ ու տափաստանի՞... Ահա մի արձակածաւալ դաշտարազեստ հովիտ. նա մի կողմից հեռաւորութեան մէջ աղօտերև ձիւնակատար լեռնաշղթայից է եղերված. առվեռմդ մի փարթամ սարահարթ է և ապա հանդէպդ տարածված է հովիտը, որ հուսկ վերջում օդեղէն անեզրութեան մէջ է պարուրվում։ Դա Ալազանի հովիտն է։ Սա հովատմէջի մի ծառատան է, մայրեստանի մի հատուած, ուր գարուն ու առաւօտի լոյսը ծիծաղում են սաղարթների մէջ ու գալարագեղ տափի վրա, զմրուխտային մի փռվածք։ Արշալոյսի լողարանից նոր դուրս եկած այդ կտորը, թարմ ու ջինջ, դեռ ցողային տամկութիւնն երեսին, զուարթացնում է դիտող աչքը և գրաւում մի մոգական հրապուրքով։ Եղե՞լ ես կուռ գեսի ձորահովտում, Բօրժօմ հովատանում. այդպիսի մի յաւերժավայր, անառային ոգիների զբօսարան, տեսած կը լինես ժիսրից հեռու առանձնութեան մէջ։ Վաղ առաւօտեան պատին, երբ մարգարտաշաղ ձորակները նոր են ընդունում մանուկ արեգակի համբոյրները իրանց կուսական ծոցի վրա։

Սա, այս մթագաղաղ հայելին, որի վրա շունչը մեռած է, անդորրութիւնը նստած, առել է լուսինն իր ծոցը և ամբերն անկերպարան. այնտեղ մի սև կուսակութիւն կայ դիզված։ Հայելին Սևանն է, ծովը. կուսակութիւնը՝ իր կղզին։ Անաւասիկ մէկ անկիւն, երկու անկիւն Ռուսաստանի. սա ուղղաբուն, նրբահասակ, երկրին նուիրական բերեօզիանների մի պատկեր է. միւսը, ալեոր ձմեռը կանխել միջմառեան է եղել աշունքի սահմանը և շապկել է գետինը իր սպիտակ կտաւով, իսկ բերեօզիանների տերևները լուսամաքուր վշով. բայց որպիսի՞ երանգ է տուել երկինքը ձիւնին. ծաւին ծիրանի հետ զուգորդած սքանչելի՞ շպար։

Անա դարձեալ մի Սևան, ծովակն եմ ասում. թիվար նաւակներն ակօսում են ծովը դէպի կղզին. լուսափեսուր ձկնկուլները թեւարած, վերուվայր ելևէջով ու ջրերի երեսը մօտ քերելով հետամուտ են որսին. այն կողմ հեռու մի երկու մանր առագաստաւորներ, մանդաղաձև սպիտակ թեւերներով, լողում են կապուտակի վրա. ծովային ծիծեռնակներ, յուսոյ սուրհանդակներ՝ ափից առնելով ափը տանելով կեանքը։

Հանդիսադրած կտաւները մեծ ու փոքր՝ ընդամենը 32 հատ են. բոլորը բացարձակապէս ընտիր գեղարուեստի գործ։ Բանաստեղծ գեղարուեստագէտը իր բոլոր ոգին դրել է իր ստեղծագործութեան մէջ. նա աքանչելի արուեստով, մաղձէ վրձինով, զմայլելի ընտիպ երանգներով վերարտադրել է արարիչ ընութեան այստեղ աշագրաւ, ծիծաղաւէտ. այնտեղ հոյակերտ վսեմ ու պատկառեցնող ձեռագրերը, իւրաքանչիւրի վրա դնելով իր բանաստեղծական մտքի, իր խնամատարական խորհրդածութեան դրոշմը. և այդ այնպիսի մի արժանիքով՝ որ ուղղակի գրաւում գերում է զգայուն և բանիմաց դիտողին ամբողջապէս։

Նկարագրել և գնահատել իւրաքանչիւրը ըստ արժանւոյն ոչ միայն շատ երկար՝ այլ և իմ ձեռնհասութիւնից վեր եմ ճանաչում. բայց կրածս տպաւորութիւնը չը քաշվեցի, վստահացայ հաղորդել։ Թող ներվի այժմ առանձնապէս կանգ առնել մի երկուսի առաջ և մանաւանդ մէկի։

Մայր Էջմիածնում ենք. սա Ներսիսեան լիճն է, ծովատեսիլ մի աւազան։ Շինութիւնը նոր աւարտած՝ լճափնեայ սալայատակը բաց վարդագոյն հրաբխաքարի թարմութիւնն է աչքի առաջ դնում։ Ջրային մաքուր, անվրդով հայելին իր մէջն ունի առած արարատեան ջինջ երկնքի պատկերը. հրաշալի՞ է թէ ի՞նչ խաղեր է արել երկնային ակնապարար կապոյտը նրբին, տարբերեալ երանգներով այս և այն տեղ։ Սքանչելի՞ է, սքանչելի՞։ Իսկ այդ ծովածիր գմբեթը, և այն ձիւնաթաղ երկնաբերձ գագաթնե՞ը. Մասիսն այն մե՞ծ, Մասիսն այն փոքր. և այն մանուշակագոյն սիրածանելին, որ իր մէջքից վայր կապել է ալեոր լեռը. այն սիրածանելի՞ն, որ Աղատ լեռան գիցուհին է գործել իր վարդ մատներով և ապա, ասես, որդան կարմրի լուծուածքի միջով անց կացրել։ Ներսէսի անտառը դեռ հասակը վեր չէ առել. նա չը կայ. ուստի աչքը ազատ ընթանում է մինչև հակայ լեռան արմատը և ընդգրկում է նրա ամբողջութիւնը։ Քաջերի լեռն էլ, իր կրտսերը հետը, անա կախել են նրանք իրանց գլուխը Ներսիսեան լճի մէջ, ասես ամպեր լինեն ծովհայելու մէջ ցոլացած, բեկ-բեկ ծուէններով, բայց կօնուսակերպ ձեւաւորված՝ և գլխիվայր ծովյատակը դիտելիս։

Վսեմ է, արուեստագէտ, վսեմ է մաքիդ ոյցմունքը, և վրձինդ՝ մաքիդ հարազատը։

Ներսէս արէնն ճեմք է անում իր կերտածի ափին, ցուլը ձեռին. զոյգ վեղարներ հագին ունի, և զոյգ շաթիրներ սրանց հետևորդ։ Հեռու, միւս ափին, խորքում, նըստավում են ճեմողներ. և ծովերեսին մի թեւաւոր, ասես թեի ծայրով ցոել է ուզում ողորկ երեսը ջրի։

Նկատեցէք դուք արարատեան ծովածիր դաշտը օդեղէն բարակ շղարշի տակ և մեծացէք հեռու, հեռու ձեր աչքը՝ մինչև ձիւնապակ Մասիսները. և որոնքի մէջ գուցէ ձեր աչքի առաջ երևութանան արամական բանակները յաղթական, և Արմաւիրն իր փառքով և բանապետ մարդ Նիւքարը աշտարակներից մէկի վրա բևեռված։ Ես անցնում եմ ուրիշ տեղ։

Գիշեր է, լուսնկայ գիշեր. հարաւային գիշերներից մէկը. մի տանջված, դերբուկաւոր սարահարթի վրա ենք. դա մի գագաթ է։ Նրա վրա խորանացած է երկինքը բարձր՝ երեսին ամպեր կռնակ-կռնակ, տեղ մթին, տեղ լուսափայլ՝ որպէս ծովի փերփերացեալ պատկերը։ Երկնածիրն հանդէպդ, խորքում, խորքում, համբուրվում է երկնածրի հետ։ Աչքդ վրա հեռուն, գիշերային քօղի տակ, ազո՛ւտ նշմարվում է քաղաքը, որի վրա բարձր իշխում է տաճարը Թուխի մէջ պատված։ Քաղաքը Երուսաղէմն է. տաճարը Սողոմոնինը։ Այս կողմ, խաւարում մի խարոյկի հուրն է նշմարվում կարմրաժեռ, և նրանից գնացող ծուխը սիւնացած։ Այն կողմ ինչ-որ բրգաձև բաներ են երևում, ասես կոթողներ լինեն. բարձրանակ նոճիներ են նրանք՝ սեով քօղված։

Եթէ քաղաքը գիշերային մէգի մէջ է խորհրդաւորված, այստեղ մեր առաջ, մօտիկ, գագաթը լուսված է լուսովը լուսնի, որ ամպերի մէջ խաղում է բացխփիկ։ Ծառանում, տանջված յատակ, վրան երեք հատ խաչ. այն որ միջինն է՝ աւելի ծանր ու խոշոր, երեսի կողմն սպիտակ, պատուանդանն ի վայր արիւնն իջած դրոշմված գիծգիծ. դա Փրկչականն է։ Կողքինները աւելի թեթև, հասարակ են. մէկի թեից մի քանի կարգ կախ ընկած մնում է մի պարան։ Ցառատակը մանր գնալիս, այս կողմ ընկած նըստում եմ մի պակ. այդ այն փշեղէն հիւսուածքն է, որ տրրեց Արդարի ճակատը՝ արեան կայլակներ հոսեցնելով քունքերն ի վայր։

Լռութիւն և անդորրութիւն է թագաւորում չորս դին. գալուկ լուսինն է գրաւել մեռելական ամայութիւնը։ Բայց ով է դա, այդ միակը այն մեռելութեան ծոցում, այն արիւնոտ խաչի հանդէպ. գլուխն ուսերի մէջ քաշած, ուսերը թիկունքի հետ վերամբարձ. ընկոան է ինքը, պատմուճանը կանաչաւուն, և լուսինը լուսաւորել է նրա ողջ աջակողմը։

Ո՞վ է դա, ասես միակ խոհուն էակը, միակ արթուն խիղճը, միակ ցաւած սիրտը, որ հսկում է այդ խաչի առաջ, զոր կանգնեց՝ այժմ քնի թմբրութեան մէջ, խաւարի գրկում մրափող այդ քաղաքը։ Քաղաքը մրափում է, խաչի վրա բևեռելուց յետ եղբայրութեան, հաւասարութեան և սիրոյ կոչի աղաղակն արձակող Արդարին. արդարին՝ որ անհուն ցաւի յետին շունչն առնելիս Ամենակալի գութը հայցեց դահիճ քաղաքի գլխին, որը չը գիտէր ինչ էր գործում։ Իսկ սա, այս հոգին, գիշերային լռութեան գրկում, կառափնահատութեան այս անալից տեղի վրա, ըսկսան հասել է այդ արիւնոտ խաչի առաջ, անսահման կսկիծը սրտում։ Հոգին գալարվում է, մարմինը կարկամած, կերտը, իւրաքանչիւրի վրա դնելով իր բանաստեղծական մտքի, իր խնամատարական խորհրդածութեան դրոշմը. և այդ այնպիսի մի արժանիքով՝ որ ուղղակի գրաւում գերում է զգայուն և բանիմաց դիտողին ամբողջապէս։

Նկարագրել և գնահատել իւրաքանչիւրը ըստ արժանւոյն ոչ միայն շատ երկար՝ այլ և իմ ձեռնհասութիւնից վեր եմ ճանաչում. բայց կրածս տպաւորութիւնը չը քաշվեցի, վստահացայ հաղորդել։ Թող ներվի այժմ առանձնապէս կանգ առնել մի երկուսի առաջ և մանաւանդ մէկի։

Մայր Էջմիածնում ենք. սա Ներսիսեան լիճն է, ծովատեսիլ մի աւազան։ Շինութիւնը նոր աւարտած՝ լճափնեայ սալայատակը բաց վարդագոյն հրաբխաքարի թարմութիւնն է աչքի առաջ դնում։ Ջրային մաքուր, անվրդով հայելին իր մէջն ունի առած արարատեան ջինջ երկնքի պատկերը. հրաշալի՞ է թէ ի՞նչ խաղեր է արել երկնային ակնապարար կապոյտը նրբին, տարբերեալ երանգներով այս և այն տեղ։ Սքանչելի՞ է, սքանչելի՞։ Իսկ այդ ծովածիր գմբեթը, և այն ձիւնաթաղ երկնաբերձ գագաթնե՞ը. Մասիսն այն մե՞ծ, Մասիսն այն փոքր. և այն մանուշակագոյն սիրածանելին, որ իր մէջքից վայր կապել է ալեոր լեռը. այն սիրածանելի՞ն, որ Աղատ լեռան գիցուհին է գործել իր վարդ մատներով և ապա, ասես, որդան կարմրի լուծուածքի միջով անց կացրել։ Ներսէսի անտառը դեռ հասակը վեր չէ առել. նա չը կայ. ուստի աչքը ազատ ընթանում է մինչև հակայ լեռան արմատը և ընդգրկում է նրա ամբողջութիւնը։ Քաջերի լեռն էլ, իր կրտսերը հետը, անա կախել են նրանք իրանց գլուխը Ներսիսեան լճի մէջ, ասես ամպեր լինեն ծովհայելու մէջ ցոլացած, բեկ-բեկ ծուէններով, բայց կօնուսակերպ ձեւաւորված՝ և գլխիվայր ծովյատակը դիտելիս։

Վսեմ է, արուեստագէտ, վսեմ է մաքիդ ոյցմունքը, և վրձինդ՝ մաքիդ հարազատը։

Ներսէս արէնն ճեմք է անում իր կերտածի ափին, ցուլը ձեռին. զոյգ վեղարներ հագին ունի, և զոյգ շաթիրներ սրանց հետևորդ։ Հեռու, միւս ափին, խորքում, նըստավում են ճեմողներ. և ծովերեսին մի թեւաւոր, ասես թեի ծայրով ցոել է ուզում ողորկ երեսը ջրի։

Նկատեցէք դուք արարատեան ծովածիր դաշտը օդեղէն բարակ շղարշի տակ և մեծացէք հեռու, հեռու ձեր աչքը՝ մինչև ձիւնապակ Մասիսները. և որոնքի մէջ գուցէ ձեր աչքի առաջ երևութանան արամական բանակները յաղթական, և Արմաւիրն իր փառքով և բանապետ մարդ Նիւքարը աշտարակներից մէկի վրա բևեռված։ Ես անցնում եմ ուրիշ տեղ։

Գիշեր է, լուսնկայ գիշեր. հարաւային գիշերներից մէկը. մի տանջված, դերբուկաւոր սարահարթի վրա ենք. դա մի գագաթ է։ Նրա վրա խորանացած է երկինքը բարձր՝ երեսին ամպեր կռնակ-կռնակ, տեղ մթին, տեղ լուսափայլ՝ որպէս ծովի փերփերացեալ պատկերը։ Երկնածիրն հանդէպդ, խորքում, խորքում, համբուրվում է երկնածրի հետ։ Աչքդ վրա հեռուն, գիշերային քօղի տակ, ազո՛ւտ նշմարվում է քաղաքը, որի վրա բարձր իշխում է տաճարը Թուխի մէջ պատված։ Քաղաքը Երուսաղէմն է. տաճարը Սողոմոնինը։ Այս կողմ, խաւարում մի խարոյկի հուրն է նշմարվում կարմրաժեռ, և նրանից գնացող ծուխը սիւնացած։ Այն կողմ ինչ-որ բրգաձև բաներ են երևում, ասես կոթողներ լինեն. բարձրանակ նոճիներ են նրանք՝ սեով քօղված։

Եթէ քաղաքը գիշերային մէգի մէջ է խորհրդաւորված, այստեղ մեր առաջ, մօտիկ, գագաթը լուսված է լուսովը լուսնի, որ ամպերի մէջ խաղում է բացխփիկ։ Ծառանում, տանջված յատակ, վրան երեք հատ խաչ. այն որ միջինն է՝ աւելի ծանր ու խոշոր, երեսի կողմն սպիտակ, պատուանդանն ի վայր արիւնն իջած դրոշմված գիծգիծ. դա Փրկչականն է։ Կողքինները աւելի թեթև, հասարակ են. մէկի թեից մի քանի կարգ կախ ընկած մնում է մի պարան։ Ցառատակը մանր գնալիս, այս կողմ ընկած նըստում եմ մի պակ. այդ այն փշեղէն հիւսուածքն է, որ տրրեց Արդարի ճակատը՝ արեան կայլակներ հոսեցնելով քունքերն ի վայր։

Լռութիւն և անդորրութիւն է թագաւորում չորս դին. գալուկ լուսինն է գրաւել մեռելական ամայութիւնը։ Բայց ով է դա, այդ միակը այն մեռելութեան ծոցում, այն արիւնոտ խաչի հանդէպ. գլուխն ուսերի մէջ քաշած, ուսերը թիկունքի հետ վերամբարձ. ընկոան է ինքը, պատմուճանը կանաչաւուն, և լուսինը լուսաւորել է նրա ողջ աջակողմը։

Ո՞վ է դա, ասես միակ խոհուն էակը, միակ արթուն խիղճը, միակ ցաւած սիրտը, որ հսկում է այդ խաչի առաջ, զոր կանգնեց՝ այժմ քնի թմբրութեան մէջ, խաւարի գրկում մրափող այդ քաղաքը։ Քաղաքը մրափում է, խաչի վրա բևեռելուց յետ եղբայրութեան, հաւասարութեան և սիրոյ կոչի աղաղակն արձակող Արդարին. արդարին՝ որ անհուն ցաւի յետին շունչն առնելիս Ամենակալի գութը հայցեց դահիճ քաղաքի գլխին, որը չը գիտէր ինչ էր գործում։ Իսկ սա, այս հոգին, գիշերային լռութեան գրկում, կառափնահատութեան այս անալից տեղի վրա, ըսկսան հասել է այդ արիւնոտ խաչի առաջ, անսահման կսկիծը սրտում։ Հոգին գալարվում է, մարմինը կարկամած,

ներողութիւն է հայցում իր վարդապետի ստուերից։

Գնա, զղջացեալ հոգի. դու քաջիկ քաւեցիր քո մեղքը. քեզ մնում է գնալ, երեսուն արծաթը յանդիմանութեամբ ծեփել դատաճանների երեսին, և դառնալ քո վիզը քցել այդ պարանը՝ որով կապեցին իբրև մահապարտի քո վարդապետի ձեռները։ Նկարիչ բանաստեղծը պատկերացրել է քեզ զղջացեալ. իսկ ներողութեան վարդապետը աջակողմեան խաչվածի հետ քեզ ևս ընդունած չէ լինի երկնաւոր Հօր թագաւորութեան մէջ։ Դու ամենաթանգավը, քո կեանքովը հատուցիր քո գործած մեղքը. քո կեանքի գնով խոստովանեցիր և հաստատեցիր մեզաւոր և կեղծապարիշտ քաղաքի հանդէպ քո վարդապետի յաւիտենական արդարութիւնը։

—

Օրը տարաժամած էր. վերադարձած եմ այցելուներին ներս ընդունողի սեղանի առաջ։

— Քանի՞ է հասել այցելուների թիւը մինչև օրս – մի քանի օրից հանդէսը փակվելու էր։

— Լիավճար և կիսավճար (20 կօպ. և 10 կօպ. մուտքը) ընդամենը իբր 1500 հոգի,— եղաւ պատասխանը։

— Իսկ պատկերներից առնող։

— Միայն մէկը, մի ռուս դերձակ։

— Հայ կրեսոսներից այցելող։

— Մէկը միայն։

— Եկեղեցիներից։

— Գիտական համագումարն եկածներից ունեցանք բաւական այցելուներ։

Հոյակապ ապարանքներ են պատրաստվում Թիֆլիսում։ Շինարար հայը օր աւուր զարգացում է քաղաքը այդ մեծածախս դեղեցիկ կերտուածներով։ Մթթէ կարող է կասկած լինել, որ մեր նկարչական դեղարուեստի հոյակապ գործերն էլ շքեղ շրջանակների մէջ առնված մուտք են գործելու այդ հոյակերտ ապարանքների մէջ, սրանց ներքին պարուսակութեան գեղեցկութիւնը գերիվեր պանծացնելով քան արտաքինը։

Ա. Մ. Եղեկեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դիլիջան, 24 յուլիսի

«Մշակի» № 157-ում զետեղված է մի թղթակցութիւն Դիլիջանից «Minor» ստորագրութեամբ։ Թղթակիցը հաղորդում է այնքան սխալ և անհիմն տեղեկութիւններ Դիլիջանի ակումբի և տեղական կեանքի պայմանների մասին, որ թողնել առանց հերքման ակումբի աւագների խորհուրդը դժնում է անհնարին։

Թղթակցութեան հեղինակը, նկարագրելով տեղական ակումբը, մի ծանր և անարդար մեղադրանք է դնում ակումբի աւագների խորհրդի վրա, ասելով թէ իբր վերջինս «արհամարհելով տեղումս գտնվող հայ դերասանական խումբը, ամենայն սրատեսութեամբ ընտրել է հասարակական խաղամոլութեան ոգին»։ Այս տողերը ցոյց են տալիս, որ հեղինակը եթէ դերասան չէ, գէթ դերասանական խմբին շատ մօտ անձնաւորութիւն է։ Եթէ այդպէս է, ապա ինչու՞ իրողութիւնը աղաւաղում է, ինչու՞ ճշմարտութիւնը ծածկում է։ Մթթէ յայտնի չէ, որ աւագների խորհուրդը դեռ սեղմի սկզբին թոյլ է տուել հայ դերասանական խմբին ամեն շաբաթ մի օր ներկայացում տալ և խումբը կանոնաւոր կերպով օգտվում է այդ իրաւունքից։ Իսկ եթէ թղթակիցը ցանկանում է, որ շաբաթը մի քանի օր թոյլ տրվի հայերէն ներկայացումներ տալ, ինչպէս որ խմբի ներկայացուցիչները խնդրեցին սկզբում, այդ՝

նելի տեղ՝ աւելի նպատակայարմար կը լինէր, որ թղթակիցը յայտարարէր շուկայի հաստատված տակսան, այն է՝ տաւարի միսը 11 կ. ֆ., ոչխարի միսը 14 կ. ֆ., հացը առաջին տեսակը ֆունտը $4^1/_2$ կ., երկրորդ տեսակը $3^1/_2$ կ. ֆունտը, առանց տակսի առասպելական «սոխը»՝ տեղականը 5 կ. ֆ., իսկ Բաթումից բերածը ֆ. 10 կ., թարմ մրգերը (ծիրանը, տանձը, սալորը) 8—10 կոպէկ ֆունտը։ Աւելորդ չենք համարում յայտնել, որ նորաբաց Դիլիջանի բարեկարգութեան ընկերութեան կողմից կազմված սանիտարական մասնախումբը, որի մէջ մտել են 15 հայ երիտասարդներ, գլխաւորապէս ուսանողներ, խստիւ հսկում է և բազարի մթերքների վրա. եղել են դէպքեր, երբ ոչնչացրել են արկղերով մրգեր, միս, երբ նկատել են, որ թարմ չեն և փչանում են։ Ակումբի խորհուրդը ցաւ է յայտնում, որ անյայտ թղթակիցը, օգտվելով խմբագրութեան սիրալիութիւնից, դիտաւորեալ կերպով անհիմն տեղեկութիւն է հաղորդել և աղաւաղել իսկութիւնն ու ճշմարտութիւնը։

Դիլիջանի ակումբի

Աւագների խորհուրդ

ՋՐԱՏԱՐ ՑՈՑՍ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 13 յուլիսի

Մեր հոգևոր ծխական դպրոցների մեծագոյն մասը նիւթականապէս ողորմելի դրութեան մէջ է գտնվում, որոնցից, համեմատական չափով, պակաս թշուառութիւն չէ վայելում և Հաղբատի ս. Նշանեան ուսումնարանը, որովհետև ոչ անշարժ կալուածք ունի և ոչ դրամագլուխ. գիւղացիների էլ մեծ մասը չափազանց աղքատ է, պատճառ, որ նրանք վարելահողի մեծ պակասութիւն են զգում. եղածներն էլ, իրանց յոգնածութեան պատճառով, լաւ բերք չեն տալիս. այդ ինքնին և ուրիշ պաղատու ծառերն էլ թողի, չոռի և Ալլահվերդիի գործարանի ծխից են վնասվում. իսկ անասունները, համարեա ամեն տարի, զանազան հիւանդութիւնների և գողերի հիրանոներն ընկնում. և այդ բոլորը մեր գիւղացոց համար մի թշուառ դրութիւն ստեղծում։ Հաղբատեցոց ծայր աղքատութիւնը կարելի է նրանից հասկանալ, որ իրանց հին նշանաւոր «Մել» աղբիւրի ջուրը, որի ճանապարհի վրա խոզերն են լողանում և ապականում, մանաւանդ ամառները, գիւղացիք չեն կարողանում բերել տալ և ամբողջ գիւղին առողջարար ջուր մատակարարել։

Գիւղը վաղուց ունի ծխական դպրոց, երեք բաժանմունքով, որի ծախքի մի մասի համար՝ ինքը, իր աղքատ տեղով, տարեկան հազիւ-հազ 252 ր. 50 կոպէկ է տալիս՝ որպիսի գումար ծխական ժողովով 1912 թ. յուլիսի 22-ին որոշվեց։ Ընդհանուր ծախքը մօտաւորապէս տարեկան 600 ռուբլի է։ Հարկաւ՝ գիւղական այդ տուրքով անհնարին կը լինէր ուսումնարան բաց անել և գոյութիւնը շարունակել. ուստի նոյն ժողովը զբաղվեց և դրա պահպանութեան մի քանի միջոցներով։ Սա ինձ, որպէս հոգաբարձութեան նախագահի, յանձնարարեց ժողովարարութիւն անել մեր գիւղից դուրս ընակվող սակաւաթիւ տեղացիների մէջ, որը, մասամբ, շատ դժուարութեամբ կարողացայ գլուխ բերել։ Ժողովը, բացի դրանից, որոշեց խնդրագրով դիմել մերձաւոր հոգևոր իշխանութեանը՝ վանքից 100 ր. ստանալու. միայն սա մերժեց, պատճառաբանելով վանքի, առանց այդ էլ, աղքատ դրութիւնը, որի տարեկան բիւջէն 6—700 ռուբլով է սահմանափակվում, ըստ ցուցման վանահայրերի։ Հասարակութիւնը, սրա հետ միաժամանակ, դիմեց և Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհրդին, որը նոյնպէս մերժեց և յայտնեցին տաղ ու տարափ արեց, յետոյ առանձնապէս դպրոցի հոգաբարձութիւնը դիմեց «Ալլահվերդիի» ֆրանսիական ընկերութեանը, որ սա՝ գիւղին հասցրած վնասի փոխարէն, որպիսին նրա գործարանի ծխից է առաջ գալիս, տարեկան մի որոշ նպաստ տայ. բայց սա էլ հոգաբարձութեան խնդիրը ջուրը գցեց։ Հասարակութիւնը նոյն ժողովում կոլլեկտիվ խնդրագրով դիմեց Կ. Հ. Բ. Ընկերութեանը, բայց սրանից էլ դառն լռութիւն ստացաւ, հետևապէս՝ այստեղ էլ հասարակութեան աղերսանքը ջրի ալիքների հետ խառնվեց և անդունդը գլորվեց։

Ահա այսպիսի դժուար բռնչներ քաշեց մեր դպրոցը, որի միակ մխիթարիչը հանդիսացաւ վերջին 5 տարիներում պ. Միք. Յովս. Արամեանը, որ, գիւղի նիւթական թշուառ դրութեան մէջ մտնելով, Բազուի Հայոց Կուլտուրական Միութեան միջոցով, տարեկան 180—250 ր. նպաստ տուեց։ Օրնվի նրա ծնունդը, որ կենսատու հրեշտակ հանդիսացաւ մեր դպրոցի համար. եթէ այդ նպաստը չը լինէր, դպրոցը երբէք չէր կարող գոյութիւն ունենալ։

Միայն դրանով վերքը ամբողջովին չէր բժշկվի. հարկաւոր էր և՛ ապագայ դրութիւնը ներկայիսի հետ ապահովել, որի համար էլ ես զանազան տեղեր դիմեցի, ի միջի այլոց և Կ. Հ. Բ. Ընկերութեանը։ Ցոյսս շատ մեծ էր, որ վերջինից կը ստացվի մօտաւորապէս 200 ր. և դրանով դպրոցի ապագայ գոյութիւնը փոքր ի շատէ կապահովվի։

Բայց ի՜նչ... «Մշակի» մէջ նպաստ ստացող «բաղդաւոր» ուսումնարանների ցուցակը կարդալով՝ բոլորովին յուսահատվեցի։ Ցաւս աւելի կրկնապատկվեց նրանով, որ «նպաստաւորեալ» դպրոցների մէջ այնպիսիները կարդացի, որոնց հասարակութիւնները, փառք Աստուծոյ, բազմամարդ են, աւելի բարւոք դրութեան մէջ են գտնվում (տես նամակ հ. Էդիլեանի, Քարվանսարայից, «Մշակ» № 151). բացի դրանից՝ իրանց մէջից էլ այնպիսի պատուական, բարեսիրտ և լաւ կարողաւոր անդամներ կան, որոնք փառաւոր կերպով կարող են իրանց օգնութեան ձեռքը մեկնել և մեկնում էլ են իրանց դպրոցներին. փառք և պատիւ այդպիսիներին։

Ես շատ դէմ եմ գիւղացիներին պարտաքուծութեան սովորեցնելուն. ամեն մի մարդ, եթէ կարող է, պէտք է ինքը իր քրտինքով հոգայ իր զաւակի կրթութիւնը. ուրիշի վրա յոյս դնելը պարազիտութիւն է և պարզևներ էլ կը պատրաստէ. բայց երբ տեղը ոչինչ չէ մնում, իսկ եղածն էլ միայն չոր ուցամաք հացի գնով է գնում, էլ որտեղից կարելի է մտաւոր կրթութեան մասին հոգալ։ Այս դէպքում մնում է միայն ուրիշ ունեցող անձանց և հաստատութեանց դիմել՝ նպաստ խնդրելու, որի հիման վրա ես այդպէս էլ արի. միայն ափսոս, որ Հաղբատի դպրոցն էլ ջրատարների շարքն ընկաւ։ Ես երբէք մտքովս չէի կարող անցկացնել այն հանգամանքը, թէ Կ. Հ. Բ. Ընկ.-ը կարող է այդպէս չափազանց խիստ վարվել թէ՛ դէպի Հաղբատի հասարակութիւնը և թէ՛ դէպի նրա այն ուսումնարանը, որ հին ժամանակներում մեր ազգին ու եկեղեցուն սրբազօր պաշտպաններ է տուել և պատուական մատենագիրներ շնորհել։

Մեր բոլորի պարտականութիւնը պէտք է լինի այդ դպրոցի հին փառքը վերաստեղծել և վանքը գիտական միաբանութեան վերածել, հոգալով թէ վանքի անհրաժեշտ նորոգութիւնը և թէ նրա դպրոցի բարելաւ գոյութեան անպայման շարունակութիւնը։

Գիւղական տուրքին և Միք. Արամեանի նպաստին եթէ իմ խնդրած փոքրիկ գումարը տարեկան աւելացվի, գոնէ դպրոցը փոքր ի շատէ կանոնաւոր դրութեան մէջ կը պահվի և մշտապէս կերազործվի «պարտադիր ուսման» պահանջը, որ այս տարի փառաւոր կերպով այստեղ, մեր հանուր հայկական կեանքում իբրև առաջին փորձ, աջողութեամբ իրագործվեց։

Ուրեմն՝ ձեռքներդ մեկնեցէք դէպի Հաղբատի վանքը և դէպի նրա ուսումնարանը, ով մեծագործ անձինք և հիմնարկութիւններ։ Սոյն կոչիս միակ նպատակն է ձեզ դիմել և ձեր գթութիւնը հայցել. դուք ձեր շնորհած նպաստներով մեծ անուն կը վաստակէք։

Հաղբատի ս. Նշանեան դպրոցի
հոգաբարձութեան նախագահ՝
Գրիգորիս աւ.-ք. Երզնկեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Երևանի հայոց թեմ. դպրոցի հոգաբարձութեան

Մեծ-Ղարաքիլիսա, 24 յուլիսի

Լրագրութեան միջոցով արդէն յայտարարել էք, որ ձեր խնամքին յանձնված դպրոցի համար հարկաւոր են ուսուցիչներ, որոնցից մէկը պիտի ստանձնէ հայոց լեզուի դասեր։

Հաւատի աղբիւրից տեղեկացայ, որ նոր ուսուցչին հրաւիրում էք ձեր խնամքին յանձնված դպրոցում երկար տարիներ պաշտօնավարած Պատուական Քուշմանեանի տեղը, որի նկատմամբ հոգաբարձութիւնդ բարեհաճել է արձակման վճիռ կայացնելու։

Ամենքս յայտնի է, որ ցանկալի ուսուցիչը պիտի ունենայ հետևեալ բարեմասնութիւնները.

ա) Նա պիտի տիրապետէ իր առարկային,

բ) պիտի դասաւանդելու շնորհք ունենայ և

գ) պիտի սիրէ և սիրել տայ ու բարեխիղճ լինի իր աւանդելիք նիւթը։

Եթէ ուսուցիչը կարողանում է բաւարարել վերոգրեալ պահանջներին, ուրեմն նա արժանի է միայն և միայն խրախուսանքի և շնորհակալութեան։

Արդ՝ գժուրկ է յիշեալ բարեմասնութիւններից ձեր կողմից արձակված ուսուցիչը։

Ես, ինձ հետ միասին նրա պաշտօնակիցները, Երևանի հասարակութիւնն ու թեմաստանում սովորող ու սովորող բոլոր աշակերտները միաբերան կասենք, որ Քուշմանեանը կարող այժ է, օրինակելի դասատու և ոգևորված ուսուցիչ։

ա) Նա աւարտել է Գէորգեան ճեմարանը (լարանական բաժ.) և երկու տասնեակ տարիների փայլուն պաշտօնավարութեան ընթացքում իր առարկային տիրապետող մասնագէտ է դարձել։

բ) Նրա դասաւանդութեան եղանակը կարող է բաւարարել մանկավարժական պահանջներով առաջնորդվող ամենախիստ քննադատին անգամ։ Այս խոստովանում են նոյնիսկ նրա ոխերիմ հակառակորդները և այս կողմից նա ուղղակի անփոխարինելի է։

գ) Նա կարողացել է ներշնչել իր աշակերտներին այն ատիճանի, որ սրանք հարգներով ցրվելով մեր երկրի բոլոր կողմերը միշտ օրինակ ու առաջնորդ ունեն ուսուցիչ Քուշմանեանի եռանդուն, աշխոյժ ու նուիրական պատկերը...

Մասնաւորելով կատարված փաստը՝ առաջիկայ ընտրութեան օրը ուղղեցէք ձեր կոչական սիլը։

Թեմ. դպ. նախկին սան՝
Խաչատուր Աւդալբէգեանց

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

25 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արգելք է դրված «Рабочая Правда»-ի № 11 և «Живая Жизнь»-ի № 13 համարների վրա։

ՍԷՎԱՍՏՈՊՕԼ։ Օդային նաւատորմը, բաղկացած 5 աէրոպլաններից, Եւպատորիայից դէպի Սակի, Սիմֆէրոպոլ թռիչք կատարեց և վերադարձաւ։

ՄՈՍԿՎԱ։ Տիկին Ռէյնբօտը, առաջին ամուսնուց Մօրոզովա, նահանգական զեմստվոյին նուիրեց 2վինօգրաֆան գաւառում իր ունեցած կալուածը 180,000 ր. արժողութեամբ և 130,000 ր. դրամագլուխ ի յիշատակ Սավվա Տիմոֆեյէվիչ Մօրոզովի այգեգործական կամ արհեստաւորաց դպրոց հիմնելու նպատակով։

ԻՆԴԻ (Պատահական)։ Նօրվէգիական ընկերութեան «Կօրբէկտ» շոգենաւը ուղևոր Ֆրիդիօֆ Նանսէնի և Պետական Դումայի անդամ Վ. Օստրոմիսկի, Խրիստիանիայի ռուսական դեսպանատան քարտուղար Լ. Օրիս-Մելիքեանի, «Լիդ» ընկերութեան դիրեկտորի հետ միասին, ալտայեան երկաթուղու համար վերցրած ցեմենտով և այլ ապրանքներով բեռնաւորված դուրս եկաւ Գօնիկովագից և ուղևորվեց դէպի Նոր Երկիր և Ենիսեյ։ Եկսպէդիցիան նպատակ ունի ուսումնարան յարաբերութիւններ հաստատել Եւրոպայի և Սիբիրի միջև Սառուցեալ ովկիանոսով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մօտ ժամանակներս Կառլսրուհեցում վախճանվել է մի գերմանացի կալուածատէր՝ Հերման Կնօբը, որը թողել է կտակով 3 միլիոն մարկ գերմանական կայսրին։ Կտակում ասված է. «Ես նշանակում եմ իմ միակ ժառանգը գերմանական կայսրին։ Իմ կտակը պէտք է գործադրվի յօգուտ ցամաքային զօրքի և նաւատորմի ուժեղացմանը և աճեցմանը»։

Արդարադատութեան մինիստրութեան մէջ, ինչպէս հաղորդում է «День» լրագիրը, մշակված է մի օրինագիծ արուեստական վիժումն անելու համար պատասխանատուութեան ենթարկելու յանցաւորներին։ Իր արգանդի պտուղը մեռցնելու մէջ մեղաւոր մայրը պատժվում է մինչև 3 տարի ուղղիչ տան մէջ բանտարկվելով։ Եթէ յղի կնոջ արգանդի բերքը փչացրել է բժիշկը կամ տատմայրը, դատարանին իրաւունք է վերապահվում արգելել յանցաւորին 1—5 տարի ժամանակով բժշկականութեամբ պարապվելու և հրապարակել իր այդ վճիռը։ Նախագծի համաձայն՝ պատժվում են նաև այդ գործում մասնակցողները, նպաստողները և պտուղը փչացնելու համար անհրաժեշտ միջոցներ հայթհայթողները։ Եթէ փչացնելը կատարվել է առանց յղի կնոջ իրա համաձայնութեան, այն ժամանակ յանցաւորները պատժվում են մինչև 8 տարի տաժանակիր աշխատանքի դատապարտվելով։ Յանցանքը թեթևացնող հանգամանքներ եղած դէպքում, պատժիչ տունը փոխարինվում է բանտով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թվի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կարուլ 8 ժ. 6 ր. եր., Բաքու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօստաստր գնացքը № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կարուլ 10 ժ. 46 ր. առ., Բաքու 3 ժ. 31 ր. կեր.։ Մարդատար գնացքը № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կարուլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 53 ր. առ., խառն գնացք № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. կեր., Եւլախ 5 ժ. 19 ր. կեր., Հաջի-Կարուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բաքու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻ.—Պօստաստր գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 56 ր. կեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդատար գնացք № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվո 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ Մարդատար գնացք № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 3 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ խառն գնացք № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստաստր գնացքը № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար գնացք № 24/23 (միայն II և III կարգի վագոնները)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ Մարդատար-ապրանքատար գնացք № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. ցեր., Գարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄ.—Մարդատար գնացք № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժոմ 9 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժոմ 1 ժ. 2 ր. երկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄԱՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացք № 5—9 ժ. 35 ր. եր. Պօստաստր գնացք № 3—9 ժ. 1 ր. առ.։ Մարդատար գնացք № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ խառն գնացք № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Պօստաստր գնացք № 4—9 ժ. 16 ր. երկ.։ Մարդատար գնացք № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ Մարդատար գնացք № 10—8 ժ. 40 ր. առ.։ խառն գնացք № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստաստր գնացք № 4Ա./3—7 ժ. 32 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացք № 26,25—(II և III կարգի վագոնները)—10 ժ. 50 ր. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացք № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացք № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ Մարդատար գնացք № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր չվէցպար. ժամացոյցների պահեստի շրջանառութիւնը ընդլայնելու նպատակով մենք ուղարկում ենք ձրիաբար 84 յարգի արծաթէ ժամացոյց 15 քարով, կամ թէ՝ դրա փոխարէն՝ վճարում ենք

քսան եւ հինգ ռուբլի կանխիկ դրամ

նրան, ով ուղիղ կերպով կը վճռէ ստորև բերված խնդիրը և միևնոյն ժամանակ կը պատուիրէ մեզ մօտ սեպողպատեայ 1 հատ ժամացոյց (գարանտիայով) ուղարկելով 2 ր. 35 կ. (կարելի է և մարկաներով), կամ թէ վերագիր վճարով՝ 2 ր. 45 կ.։

? ?

Քառակուսի 9 վանդակներում 1—9 թուանշանները պիտի դեսեղել այնպէս, որ իւրաքանչիւր ուղիղ գծի (3 վանդակի) գումարը լինի 15, և որ այդ գումարը կրկնվի, ըստ կարելոյն, աւելի շատ անգամ։ Խնդիրը լուծելու իրաւունքը պատկանում է նրան, ով մեզ մօտ պատուիրած և վճարած ունի ժամացոյցի համար։ Որովհետև իւրաքանչիւր անձ, ով ուղիղ կերպով վճռած ունի խնդիրը, ստանում է պրէմիա, հետևաբար՝ դիմում անելուց պիտի յայտնել, թէ որ պրէմիան է ցանկանում—արծաթէ ժամաց. թէ՞ դրամը, նոյնպէս և նամակի մէջ նշանակել հշգրիտ հասցէն։ Т-во „Мысль“, Лодзь. П. 17 (Л. 13051) 1—1

ՈՐԴԻՒՔ Բ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆՑ Առեւտ. Տան
ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ
(Սերգիէվսկայա փողոց № 7.)
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ **ՋՈՒԼՖԱ-ԹԱՒՐԻԶ** ՄԵԿՆՈՂ
Գ. Կ. ՎԱՍԻԼԻԵՎԻ ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ՏՈՄՍԱԿՆԵՐԸ։
Արագընթաց աւտոմօբիլները մեկնում են՝
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը։
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Եղբ. Բուդաղեաններեր Ա/Տ. և Հաջի Հասանի
Ֆայէտօնների եւ այլ կառքերի տոմսակները։
Մեկնում են ամեն օր՝
ՋՈՒԼՖԱՅԻՑ—ԹԱՒՐԻԶ
ՋՈՒԼՖԱՅԻՑ—ՇԱՐԱՖԽԱՆԱ (Ուրմիայի լճի ափերը)։
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Եղբ. Բուդաղեաններեր Ա/Տ. բարկազի տոմսակները։
Մեկնում է ամեն օր՝ ՇԱՐԱՖԽԱՆԱՅԻՑ—ՈՒՐՄԻԱ (Ուրմիայի լճի ափերը)
I, II և III կարգերով (III կարգը պալուբայի վրա)։
Կարելի է ստանալ տոմսակները նաև ուղղակի հաղորդակցութեան
ՋՈՒԼՖԱՅԻՑ—ՈՒՐՄԻԱ I, II և III կարգերի համար։
ՏԵՂԵՐԸ ՎԱՂՕՐՕՔ ԿԱՐԵԼԻ Է ԳՐԱԽԵԼ ՀԵՌԱԳՐՈՎ.
Դրամի փոխադր. Պարսկաստանի բոլոր քաղաք.
Գրասենեակը բաց է առաւօտ. ժամը 9-ից մինչև ցեր. ժ. 2-ը և ցեր. ժ. $4^1/_2$-ից մինչև երեկ. ժ. $7^1/_2$-ը։
(2.) 577. 10—2

95 ԿՕՊԵԿՈՎ
ՍԵՆՕ ՀԻԱՑՄՈՒՆՔ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ
ՏՆԱՅԻՆ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԳՐՔՈՑԿԸ

Այս գրքոյկով իւրաքանչիւրը կարող է գուշակել այլոց մտքերը, տեսնել առաջացնել, իմանալ ով ում է սիրում, ամենի տնուր։ Օձը փայտ կարելի է դարձնել, իսկ ջուրը գինի։ Մագիայի խորհուրդները և գաղտնիքները վերջապէս բացված են։ Կարգադրը ընկել է վերջապէս և այժմ կարելի է վերցնել շինացրած նրկանը մերկ ձեռքերով, մտել մեռը լեռուի մէջ՝ ծակել իրան սրով, ցուցադրել կտրած բօսոր գլուխը և ինքն իրան անխոցելի դարձնել։ Ջուրը դրամի վերածելու արուեստ։ Բնակարանը վարդենապէս լցնել Ջրով կամ մառախուղով և բազմաթիւ այլ շլացուցիչ փօխուններ։ Փօխունների ժամանակ ամեն տուն կարելի է վերածել կախարդված ամրոցի։ Գինը **95** կօպ.։ Ուղարկ. է վերագիր վճ.։ Առաքման և վերագիր վճ. համար աւելորդ հաշվումներ 25 կ.։ Զգուշացէք կեղծիքներից։ Նորագոյն հրատ.։ Լրացրած 272 էջ և բազմաթիւ նկար.։ Т-во «Заря», Варшава, отд. 92.
(16,27) (В. 40602) 3—3


ՊԱԼԱՍ-ՀՕՏԵԼ
ԼՕԶ
Նորագոյն առաջնակարգ հիւրանոց
150 շքեղ կահաւորված համարներ
1 ր. 50 կ-ից սկսած
Առանձին ուշադրութիւն է դարձված օրինակելի մաքրութիւն, անդորրութիւն և կարգ ու կանոն պահպանելու վրա։
(Ե.2.) (Л. 12046) 8—7

ՀՕՆՕՐՐԵԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԵՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ“
ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հատատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցվում է արկղիկին։ Իսկականը միայն արկղիներում, համար՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դիպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատուկ ընթացք։
ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերագիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։
Խնդրում է Կովկասեան Ընկերութեան Դեղագիր Ապրանքների վաճառանոցում։
(7.) (П. 22276) 0 29

ՍՈՒԽՈՒՄ
ԲԺԻՇԿ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԻՄԷՕՆԵԱՆ
ՖՐԱՆԳՈՒԼԵԱՆՑ
Ընդունում է նեղքին և կանոնց հիւանդութիւն ունեցողներին։
Առ. ժ. 9—12 և կ.-կ. ժ. 6—8-ը։
Գօղուբակինսկայա փող. (Ազմիրալտէյսկայա), տուն Դարդէնինայի, տ. Բաջանտովայի պանսիօնում։
(օ. մ.) 575. 4—4

Հայ օրիորդ ընկարչուհի,
որ ապրում է ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ, ուզում է դասեր տալ Կովկասի կամ ուրիշ տեղերի հայ դպրոցներում։ Դասեր՝ նկարչութեան, կար ու ձևի և գաշնակի։ Դիմել Նոր-Նախիջևան, դ-ր Ե. Բեդելեանին։ Нахичеванъ н/Дону, д-ру І. Л. Бедельяну.
(о.м.) 591. 3—2

ԴՕԿՏՕՐ Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Զարունակում է ընդունել ամեն տեսակ հիւանդների և խորհրդակցութիւններ է կատարում պրոֆիսորների հետ։ Նոր հասցէն՝ Berlin N. W. Luisenstr. 67. Telephon Amt. Norden. 92—74.
(Ե. ու.) 412. 20—19

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ԲՕԳՈՒՏ ՀԱՑ ԱՐԿԱԾԵԱՆՆԵՐԻ
Հետեւեալ հրատարակութիւնները.
1) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . . . 4 ր.
2) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի . . . 4 ր.
3) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ԶԼԷԹՈՒՆՅՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
«ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկ. Գ. Բաբեանի I հատոր, Բնախօսութիւն եւ անդամագնութիւն . 1 ր.
II հատոր, Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան . . . 1 ր. 60 կ.
5) «ՇԻՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՒՐԸ ՈՒ ԳՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Գ. Ադամեանի 1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի . 50 կ.
Ցիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից զբաղողները կարող են իրանց իսկական գներով ձեռք բերել։
Թիֆլիսից դուրս պահանջողների հաշուին է ճանապարհածախսը։
1. 10—6

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный